

Երեսնամյա այսպիսին

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Սրբոց Վարդանանց տոներ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Որ զմահ ոչ զիտե՛ երկնչի ի մահումն.
Իսկ որ զիտե՛ զմահ, ոչ երկնչի ի նմանն: (Եղիշե)

Գերաշնորհ, հոգեշնորհ, արժանապատիվ հայրեր, Զարգարծան ռեկտոր, հարգելի դասախոսներ, Սիրելի ուսանողներ: Ոսկեբարբառ Եղիշեի այս միտքն ենք ընտրել բնաբան Մեր խոսքին այսօր, երբ ուրախ եւ քաջալեր հոգով նշում ենք Վարդանանց՝ Զրիստոսի հազար երեսուներեց սուրբ վկաների տոնը: Զկա առաժվել նվիրական հիշատակ, որն այդչափ խանդավառի, ջերմացնի ու լուսավորի մեր հայքրիստոնյա ինքնությունը, որքան Վարդանանց տոնը: Ասում ենք «Վարդանանք», եւ հավատքն ու հայրենիքի պատկերը միահյուսված պայծառանում են մեր հոգիներում: Վարդանանց ոգին զարմանալի ոլորություններ մեզ դարձնում է անվարան ու արի: Սուրբ Վարդանանց հետ յուրաքանչյուր հայրորդի առանց երկմտանքի իր հոգում հավաստում եւ հանձն է առնում աննկուն մալ վասն հավատքի եւ վասն հայրենյաց մարտահրավերների առջեւ: Սուրբ Վարդանանց հետ մեր հոգին լցվում է վստահությամբ, մեր կյանքը՝ լավատեսությամբ, եւ մենք հստակ տեսնում ենք՝ ով ենք, եւ դեպի ուր է մեր ճանապարհը:

Փետրվարի 16-ին Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցին տոնախմբեց Սրբոց Վարդանանց հիշատակը: Տոնի առիթով Մայր Աթոռ Սբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Պատարագ: Պատարագին էր Գեւորգ Եպս Սարոյանը:

Զարոգի ընթացքում անդրադառնալով Վարդանանց պատերազմի ու քաջարի զորավարների նահատակության խորհրդին՝ պատարագից սրբազան հայրը կարեւորեց. «Վարդանանցով պատմության մի նոր շրջան է սկսվում հայոց կյանքում, որը բնորոշվում է սեփական ինքնության հանդեպ հավատարմության հաստատումով, ազատության համար պայքարի գիտակցության արթնացմամբ: ...Վարդանանց հանճարը մեզ սովորեցրեց հավատալ դարերով փայփայած համազգային մեր երազին, դարձնել այն նպատակ, ապրել եւ պայքարել հանուն դրա»:

Սրբոց Վարդանանց զորավարաց հիշատակության օրը Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցին նշում է նաեւ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվանակոչության տոնը:

Զարոգի ավարտին, այս առիթով, Իջման Ս. Սեղանի առջեւ, նախագահությամբ Շիրակի թեմի առաջնորդ Միքայել Եպս Աշապահյանի, կատարվեց Հայրապետական մաղթանք: Մայր Աթոռի միաբաններն ու բարեպաշտ ժողովուրդը աղոթք բարձրացրեցին առ Աստված՝ Մայր Աթոռի անսասանության ու պայծառության եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կյանքի արելաշատության, խաղաղ ու բեղուն հայրապետության համար:

Այնուհետեւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, նախագահությամբ Վեհափառ Հայրապետի, տեղի ունեցավ Վարդանանց հերոսամարտին նվիրված հանդիսություն, որը կազմակերպվել էր Գեւորգյան ճեմարանի եւ ԵՊՀ-ի ուսանողության համատեղ ջանքերով:

Բացման խոսքով հանդես եկավ ԵՊՀ-ի ռեկտոր՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Արամ Սիմոնյանը, ապա բանախոսեց ճեմարանի եւ համալսարանի դասախոս՝ պատմ. գիտ. թեկ., պրոֆեսոր Պետրոս Հովհաննիսյանը:

Հանդիսության ժամանակ հոգեւոր եւ հայրենասիրական երգերով հանդես եկան ճեմարանի եւ համալսարանի երգչախմբերը:

Ավանդական դարձած այս գեղեցիկ միջոցառումն իր հայրական պատգամով ու օրհնությամբ ամփոփեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը:



մղել Աստծուն, Սուրբ Եկեղեցին, առաքինազարդ հոգու զորությունը:

Այսօր մեր առջեւ հանում են Վարդանանց պայծառ ու սիրելի կերպարները, առաքելությանց զորագլուխ սուրբ Վարդանը: Նրանցից ոմանք ընկան մարտի դաշտում, ոմանք տարիներ անց հայրենիք վերադարձան բանտարկության գերությունից: Անտեսելով փառք, բարօրություն, ապահովություն՝ նրանք մերժեցին իրենց պարտադրվող կեղծիքը եւ պաշտպանեցին մեր ժողովրդի՝ իր հավատքով, հայրենի արժեքներով, ազատ կյանքով ապրելու իրավունքը: Նրանք հաղթեցին, քանզի գիտեին, որ Աստծո հույսով իրենցից հետո 500, 1000, 1600 տարի անց ու միշտ հայ ժողովուրդը քրիստոնյա է լինելու:

1600-ամյա հեռավորությունից այսօր Վարդանանց սուրբ հիշատակի առջեւ Մեր աղոթքն է, որ հավատքի եւ հայրենյաց սիրո նրանց օրինակը ապրի մեր կյանքում եւ զորացնի մեզ մեր ժամանակի դժվարությունների ու հոգսերի մեջ, վճռելու մեր առջեւ հանող խնդիրներն ու հրամայականները եւ իրազործելու մեր տեսիլքներն ու նպատակները: Այսօր չկա հավատքն ուրանալու պարտադրանք, սակայն հավատքը կարող է նահանջել անտարբերության, հայրենյաց ժառանգության հանդեպ նվազ նախանձախնդրության հետեւանքով: Վարդանանց ոգին պիտի օգնի մեզ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՉ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՍԲ ՎԱՐԴԱՆԱՆՉ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ



Այսօր վերստին տոնի խորհրդով մենք ունկնդիր ենք Եղիշե մեծ պատմիչին, որ բոլոր դարերի համար բացահայտում է Վարդանանց սխրանքի ու Վարդանանց հաղթանակի ակունքն ու իմաստը՝ գրելով. «Ով չգիտե՛ ինչ է մահը, վախենում է նրանից, իսկ ով գիտե՛ մահը, նրանից չի վախենում»: Վարդանանց՝ Զրիստոսին ճանա-

մահը չէ, որ ընտրեցին, այլ կյանքը, որ ունեց Զրիստոսով: Նրանք ռազմի դաշտ ելան՝ պաշտպանելու իրենց հավատքը, դպրությունը, հայրենի սրբությունները, սրբազան հիշատակները, այն ամենը, ինչ «հայրենիք» ենք կոչում: Վարդանանց օրերին Հայաստանը կորցրել էր պետական անկախությունը, երկիրը բաժանված էր, բայց Հայաստան էր. Հայաստան էր մեկ ու միասնական լեզվով, գիր ու դպրությամբ, հավատքով, որ ազատ է պահում ազգի հոգին եւ գորացնում առ Աստված հույսով ու ապավինությամբ: Պատերազմ չէին ուզում մեր հայրերը եւ ամեն շանք գործադրեցին պարսից հզոր տիրակալին հավատափոխության ծրագրից տարհանալու համար, քանզի գիտեին, որ իրենք Զրիստոսին չեն ուրանալու: Ամեն նեղության դիմացել էին՝ հալածանքներին, հարկերի ծանրությանը, պաշտոնազրկմանը, բայց ընդդիմացան հավատափոխության պարտադրանքին: Ընդդիմացան անվարան, քանզի քրիստոնեությունն ունեին ոչ իբրեւ հանդերձ, այլ իբրեւ մաշկի գույն: Ընդդիմացան վստահությամբ, որ Զրիստո-



սի հետ պիտի ապրի ու կյանք ունենա հայ ժողովուրդը: Ավարայրում կանգնած էր սահակ-մեսրոպյան դպրոցի անդրանիկ սերունդը: Աշխարհական թե հոգեւորական չերկնչեցին մահից, քանզի գիտեին մահն իմացյալ եւ մարտնչում էին՝ փրկելու համար հայոց ապագան, ազգի հավիտենական կյանքը: Մահվան գնալով՝ հաղթեցին մահին, վանեցին թշնամուն, որ չկարողանա հայ կյանքից դուրս

կյանքի բոլոր պարագաներում, փորձություններին ու դժվարություններին հանդիման պահպանելու ուղղամիտ, արդար ու ազնիվ դիրքորոշումը, մարդասեր հոգին, ազգին եւ Հայրենիքին ծառայելու նվիրումն ու նախանձախնդրությունը եւ անվարան հույսը առ Աստված, որով միշտ կգտնենք ճշմարիտ ուղիները եւ օրինյալ հանգրվանները մեր կյանքի:

Շարունակությունը՝ էջ 2

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՍԲ ՎԱՐԴԱՆԱՆՅՑ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Սկզբը՝ էջ 1

Սիրելիներ, այսօր Մեզ համար մեծ ուրախություն է տեսնել, որ Վարդանանց հիշատակը ոգեկոչելու համար ճեմարանականների հետ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում համախմբվել են Երեւանի պետական համալսարանի ուսանողները՝ ռեկտորի և դասախոսների առաջնորդությամբ: Մեր գնահատանքն ենք բերում Ձեզ՝ գերաշնորհ սրբազան, մեծարգո՝ տիար Սիմոնյան, հարգարժան դասախոսներ՝ հիշատակի այս տունը ու-

զին պիտի շարունակի ապրել և փոխանցվել սերունդներին, որպեսզի Ավարայրի դաշտից Վարդանի ծայրը միշտ ազդարարի հայոց հոգիներին՝ «թերահավատությունը մենք վաղուց ենք մերժել մեզանից»: Մեր մաղթանքն է ձեզ, սիրելի՛ ճեմարանականներ, որ պատրաստվեք իբրև առատ հունձքի արժանի մշակներ և շուտով համալրելով եկեղեցականաց ուխտյալ դասը, հովվեք Տիրոջ ժողովրդին: Պարտք ունեք առաջնորդել աշխարհասփյուռ մեր գավակներին դեպի հավատքով ու հայրենյաց սի-



ասնողության հետ կազմակերպելու համար, որով ճեմարանի նորակառույց այս հարկի ներքո թեւածում է Վարդանանց քաջարի և անմահ հոգին:

Մեր հայցն է, որ Տերը գորացնի Յայրենի մեր երկիրը, պահպանի մեր ժողովրդին խաղաղ ու անվտանգ, պայծառ պահի մեր Սուրբ Եկեղեցին, մեր կրթօջախների առաքելությունը, շնորհագրորդի ձեր միտքն ու հոգին, սիրելի՛ ուսանողներ, որ լավագույն պատրաստությամբ, մաքուր հավատքով, Յայրենիքի հանդեպ սիրով ու նախանձախնդրությամբ ձեր կյանքում ու շնչերքը բերեք հայրենական կյանքի բոլոր ասպարեզներում: Ձեզ հետ, ձեր կյանքով Վարդանանց հավատավոր ու հայրենասեր հո-

րով ոռոգյալ հարենի ափեր, ուր չեն վախճում մահից, քանզի գիտեն՝ ինչ է մահը, և ինչ է կյանքը: Թող մեզ համար բարեխոս լինեն սուրբ Վարդանանց, ովքեր դասակից են երկնային գորաց «անանցանելի ուրախության և անտրտում մխիթարության մեջ»:

Սիրելիներ, այսօր անվանակոչության օրն է բոլոր նրանց, ովքեր անվանակից սուրբ չունեն: Վարդանանց պանծալի տոնի առիթով հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում և շնորհավորում Մեր բոլոր գավակներին, ում անվանակոչության օրն է այսօր:

Շնորհք, սեր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ և ընդ ամենեսան. ամեն:

Քահանայից հավաք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Հավաքի արդյունքում ընդունվեց հայտարարություն

Փետրվարի 15-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Շայրագույն Պատրիարք և Ամենայն Յայոց Կաթողիկոսի և մասնակցությամբ թեմակալ առաջնորդների, տեղի ունեցավ Ս. Ղեւոնդյանց տոնի առիթով գումարվող քահանայից ավանդական ամենամյա հավաքը՝ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում: Մասնակցում էր շուրջ 230 եկեղեցական՝ Մայր Աթոռի կառույցներից, Յայաստանի ու Արցախի թեմերից ու վանքերից: Կային ներկայացուցիչներ նաեւ Սփյուռքի թեմերից: Ժողովի քննարկման կյուրթն էր՝ «Քահանան եկեղեցական-սոցիալական աշխատանքի հիմնական դերակատար»:

Ժողովը բացվեց հավաքի կազմակերպիչ, Շիրակի թեմի առաջնորդ Միքայել եպս Աջապահյանի խոսքով, ով քահանայից դասի անունից շնորհակալություն հայտնեց Վեհափառ Յայրապետին՝ Մայր Աթոռում համախմբվելու, նրա օրհնությունն ու հայրական պատգամները ստանալու համար, ապա շնորհավորեց հոգեւորականներին՝ մաղթելով նրանց ընթանալ Ղեւոնդյանց ոգով՝ հովվական ասպարեզում:

Թեմայի շուրջ գեկույցներով հանդես եկան Յովակիմ եպս Մանուկյանը և ԵՅԻ-ի հայաստանյան «Կլոր սեղան» հիմնադրամի գլխավոր տնօրէն Կարեն Նազարյանը:

Զեկույցներից հետո տեղի ունեցավ քննարկում, որի արդյունքում ընդունվեց հետեւյալ հայտարարությունը:

«Մենք՝ Յայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու սպասավորներ, կարելորում ենք Ս. Ղեւոնդյանց քահանայից տոնը՝ որպէս իրավեր ուխտի նորոգման, առավել գորացնելու հոգեւոր մեր առաքելությունը մեր ժողովրդի կյանքում: Քահանայի հովվական առաքելության մեջ եական և կարելոր տեղ է զբաղեցնում սոցիալական ծառայությունը: Գոհություն ենք հայտնում Տիրոջը, որ մեր Եկեղեցին արդյունավորում է իր առաքելությունը տարբեր սոցիալական ձեռնարկումներով, որոնք արտահայտվում են հասարակության սոցիալական խնդիրներին՝ հիվանդներին, ազատագրվածներին, բռնության ենթարկվածներին, անապահով անձերին ու ընտանիքներին, մանուկներին ու ծերերին ուղղված հոգեխնամատարական ծրագրերով: Մենք պատասխանատու ենք նկատում մեզ հասարակության առջեւ ծառայած սոցիալական մարտահրավերների հաղթահարման գործում և կարելորում յուրաքանչյուրիս ծառա-

երկրին՝ պայծառության մեջ հաստատուն պահելով Առաքելական մեր Ս. Եկեղեցին»:

Այնուհետեւ տեղի ունեցավ պարզեւաբան խորհուրդ: Ամենայն Յայոց Կաթողիկոսը ծաղկյալ փլորն կրելու իրավունք շնորհեց Մայր Աթոռ Սբ Էջմիածնից Խորեն քին. Կիրակոսյանին, Պարույր քին. Ավետիսյանին և Տ. Վահրամ քին. Մելիքյանին:


Լանջախաչ կրելու իրավունքի արժանացան Մայր Աթոռ Սբ Էջմիածնից Մարկոս քին.



Մանգասարյանը, Յովել քին. Գամաղեյանը, Արարատ քին. Պողոսյանը, Արարատյան հայրապետական թեմից Նիկողայոս քին. Յովհաննիսյանը, Միքայել քին. Նուրիջանյանը, Աշոտ քին. Սաֆարյանը, Յարավային Ռուսաստանի հայոց թեմից Գեւորգ քին. Միքայելյանը, Գուգարաց թեմից Ներսես քին. Ղալայանը, Ահարոն քին. Գրիգորյանը, Վիգեն քին. Ղազարյանը, Վայոց ձորի թեմից Վազգեն քին. Յովհաննիսյանը, Արագածոտնի թեմից Յայլ քին. Սահակյանը, Եփրեմ քին. Չարգարյանը, Գեւորգուկաց թեմից Սողոմոն քին. Մինասյանը, ՅՅ ՁՈՒ հոգեւոր սպասավորությունից Դավիթ քին. Շախկյանը, Գեղարքունիաց թեմից Ստեփանոս քին. Իգնատիոսյանը, Տավուշի թեմից Շավարշ քին. Սիմոնյանը, Վիրահայոց թեմից Յուսիկ քին. Յարությունյանը, Նարեկ քին. Ղուլչյանը և Սամվել քին. Թորոսյանը:

Ներկա հոգեւորականներին հայրապետական իր պատգամը հղեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Յայոց Կաթողիկոսը՝ շնորհավորելով հոգեւորականներին տոնի առիթով, մաղթեց, որ Տերն օգնական և գորավիզ լինի Յայ Եկեղեցու սպասավորներին՝ իրենց առաքելությունն արդյունավոր կերպով շարունակելու մեջ:

Վեհափառ Յայրապետն անդրադարձավ նաեւ ժողովի կյուրթն. «Սոցիալական ոլորտից ներս ծառայությունը հայ եկեղեցականի կյուրթն է, նրա առաքելության հիմնական և կար-



յությունը սոցիալապես անապահով միջավայրերում, որպեսզի հոգեւոր ու բարոյական փորձությունները և կարիքը պատճառ չդառնան Աստուծոց հեռացման ու հոգիների փրկության խթանման: Այս հրամայականի առջեւ Ս. Ղեւոնդյանց քահանայից տոնի խորհուրդը դիտարկում ենք որպէս ազդու պատգամ առավել ակնառու դարձնելու համար մեր հովվական սպասավորության մեջ սոցիալական աշխատանքը: Յորդորում ենք նաեւ Յայ Եկեղեցու հավատավոր հոտի անդամներին գործնականորեն սատարելու Եկեղեցու սոցիալական ծառայությանը, ջանքեր ներդնելու Տիրոջ գթասրտության և ողորմության պատգամներն առավել արդյունավոր միջոցներով արտահայտելու համար՝ սոցիալական խնդիրներին կյանքում:

Ս. Ղեւոնդյանց քահանայից բարեխոսության հայցով աղոթում ենք առ Բարձրյալ Աստված, որ Իր խնամքի ու հոգածության մեջ հանապազ պահի ու պահպանի մեր ժողովրդին և խաղաղություն պարգեւի հայրենի մեր

րերու մասը: Անդրադարձանք մի շարք խնդիրների, ինչպիսիք են՝ թմրամոլությունը, բռնությունը, ընտանեկան դատաւարականությունը, ծնող-զավակ, տղամարդ-կին հարաբերությունները, աղքատությունը և նմանատիպ այլ երեւոյթները: Յայ եկեղեցականի կոչումն է պայքարել այնպիսի երեւոյթների դեմ, որոնք մեղք են ծնում, իսկ միջոցը բնականաբար Ավետարանի խոսքն է»:

Այդ առաքելության իրագործման հիմնական միջոց Նորին Սրբությունը նկատեց հոգեւորականի պատասխանատվությունը, նախանձախնդրությունը, կզման գիտակցությունը ծառայության հանդեպ, անվերապահ և անպայմանավոր սերը, որ պետք է մշտապես դրսևորվի հավատավոր հոտի հանդեպ:

Վերջում Ամենայն Յայոց Յայրապետն իր գնահատանքը հայտնեց թեմակալ առաջնորդներին, որոնք կմիայն աշխատանքի արդյունքում տարեց տարի առաջընթաց է արձանագրվում թեմերում:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՉԱՐԱՆՈՒՄ Ամենայն Յայոց Կաթողիկոսն ընդունեց

12 փետրվարի Ավստրիացի ուսանողների խմբին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Յայոց Կաթողիկոսն ընդունեց մի խումբ ավստրիացի կաթոլիկ ուսանողների՝ ուղեկցությամբ հայագետ Յասմին Դունթալգուրթի:

Յասմին Դունթալգուրթն ընդունելության համար շնորհակալություն հայտնեց Վեհափառ Յայրապետին և ներկայացրեց այցելության նպատակը: Նա մասնավորապես նշեց, որ Ավստրիայի տարբեր քաղաքներից ու համալսարաններից հավաքված և տարբեր մասնագիտություններ ունեցող ուսանողների այս խումբն ամեն տարի այցելում է որեւէ քրիստոնյա երկիր: Այս տարի խումբն այցելել է Յայաստան՝ ծանոթանալու հայկական հարուստ մշակույթին, պատմությանը, Եկեղեցուն և հայերի առօրյա կյանքին:

Վեհափառ Յայրապետն ուրախություն հայտնեց ուսանողներին ընդունելու կապակցությամբ՝ նշելով, որ նրանց այցելությունը հիշեցնում է իր ուսանողության տարիներն Ավստրիայում: Նորին Սրբությունն իր օրհնությունը բերեց երիտասարդներին՝ մաղթելով, որ Յայաստանի հարուստ հոգեւոր մշակույթը նորանոր ներշնչումների աղբյուր դառնա նրանց համար:

16 փետրվարի «Եկեղեցիների համատեղ գործողություն» այլանսի ներկայացուցիչներին

Ամենայն Յայոց Կաթողիկոսն ընդունեց Եկեղեցիների համաշխարհային խորհրդի «Եկեղեցիների համատեղ գործողություն» այլանսի սոցիալ-հոգեբանական խմբի անդամներին՝ ուղեկցությամբ ԵՅԻ-ի հայաստանյան «Կլոր սեղան» միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի տնօրէն Կարեն Նազարյանի:

«Եկեղեցիների համատեղ գործողություն» այլանսի գործունեությունն ուղղված է աղքատության հաղթահարմանը և արտակարգ իրավիճակների աղետալի հետեւանքների վերացմանը ողջ աշխարհում: 2010-ին կազմակերպությունն ստեղծեց սոցիալ-հոգեբանական աջակցության խումբ, որի հիմնական գործառնությունն են սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրումը ծանր հոգեվիճակում հայտնված մարդկանց՝ աղետների դիմակայման ու նրանց իսկ մասնակցությամբ դրանց հետեւանքների վերացման աշխատանքներում:

Յանդիպմանը խմբի անդամներն ուրախություն հայտնեցին խմբի տարեկան ժողովը Յայաստանում անցկացնելու հնարավորության համար, ապա Վեհափառ Յայրապետին ներկայացրեցին եռօրյա ժողովի արդյունքները:

Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց «Կլոր սեղան» հիմնադրամի և այլանսի համագործակցության առիթով՝ ընդգծելով համատեղ իրականացվող բարեգործական ու կարողությունների զարգացման ծրագրերի կարեւորությունը:

Լրատվական կյուրթը՝ ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՅԱՅԱՎԱՐԳԻ

ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱԶ

Փետրվարի 14-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց 40-օրյա մանուկ Հիսուսին տաճարին ընծայման տոնը:

Փետրվարի 13-ի երեկոյան Մայր տաճարում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց նախատոնակի արարողություն: Արարողությանը հաջորդեց անդաստանի կարգը, որի ընթացքում օրհնվեցին աշխարհի չորս կողմերը: Այնուհետև Մայր տաճարի հիման խորանից վառված մոմով Ս. Տրդատի բաց խորանի հարեանությամբ վառվեց մեծ խարույկը՝ իբրև Զրիստոսին խորհրդանշող լույս: Գետրոյան հոգեւոր ճեմարանի սաները հանդես եկան շարականների եւ ազգային երգերի կատարումներով, արարողությանը ներկա հավատացյալները խարույկից վառված մոմեր տարան իրենց օջախները:

Փետրվարի 14-ին մատուցվեց Պատարագ: Պատարագին էր Մայր Աթոռ Սբ Էջմիածնի միաբան Սուշեղ եպս Բաբայանը: Նշելով, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ Տյառնընդառաջի օրը հռչակված է նաև նորապսակների օրհնության օր, սրբազան հայրը մաղթեց, որ Տերը Սիմեոն ծերունու երկարակեցությունն ու կամքի խոնարհությունը պարզեի նորաստեղծ ընտանիքներին՝ նրանց ապագա տարիները լցնելով անսպառ օրհնությամբ:

Պատարագի ավարտից հետո կատարվեց նորապսակ զույգերի օրհնության կարգ:

Սովսիսական օրենքի համաձայն՝ երբ ընտանիքում առաջնեկն արու զավակ էր ծնվում, նրան տանում էին տաճար՝ Աստծուն նվիրաբերելու: «Ամեն արու զավակ, որ արգանդ է բացում, Տիրոջ համար սուրբ պիտի կոչվի»: Եվ Հովսեփն ու Մարիամը 40 օրական Հիսուսին տանում են Երուսաղեմի տաճար՝ Նրան «Տիրոջը ներկայացնելու» (Ղուկ. Ա 22): Երբ տեղ են հասնում, տաճարի արևելյան դուռը, որն Աստծոն հրամանով փակված էր, բացվում է՝ համաձայն Աստծոն խոսքի՝ ասված եզեկից մարգարեի միջոցով: «Այդ դուռը փակ է մնալու ու չի բացվելու, նրանով ոչ ոք չի անցնելու, որպեսզի Իսրայելի Տեր Աստվածը մտնի այնտեղով... Նա մտնելու է դռան կամարի տակի ճանապարհով եւ նույն տեղով էլ դուրս է գալու» (Եզեկիել ԽԴ 1-3):

Երբ տաճարի դռներն աղմուկով բացվում են, քաղաքում մեծ դողոյուն է բարձրանում: Երուսաղեմի բնակիչները ջահերով ու լապտերներով շտապում են դեպի տաճար եւ տեղ հասնելով՝ տեսնում մանուկ Հիսուսին՝ ծնողների մոտ:

Երբ Մարիամն ու Հովսեփը մտնում են տաճար, նրանց ընդառաջ է գալիս Սիմեոն ծերունին: Ավանդության համաձայն՝ Սիմեոնը Եգիպտոսի Պտղոմեոս թագավորի հրամանով Ալեքսանդրիայում մասնակցել

էր Հին Կտակարանի գրքերը երթալերենից հունարենի վերածելու «Յոթանասնից» թարգմանությանը: Թարգմանությունը կատարելու ժամանակ Սիմեոնը Եսայու գրքում հանդիպում է «Ահա կույսը պիտի հղիանա ու որդի ծնի» (Եսայի Է 14) նախագատությանը: Մտածելով, թե շատերը չեն հավատա այս խոսքին, ջնջում է այն: Որոշ ժամանակ իր արածի մասին մտորելուց հետո շուտով նիրհում է, իսկ երբ արթնանում է, տեսնում է, որ այն հատվածը, որ ինքը ջնջել էր, ոսկե տառերով նորից գրվել էր նույն տեղում: Սիմեոնը փառաբանում է Աստծուն եւ երանի տալիս նրան, ովքեր պետք է ակնատես լինեն այդ դեպքին: Սբ Հոգին, տեսնելով Սիմեոնի հավատքը, ասում է. «Մահ չես տեսի, մինչեւ տեսես Տիրոջ Օծյալին»: Եվ երբ Սիմեոնը, Հոգով առաջնորդված, տաճար է գնում եւ տեսնում Հիսուսին, օրհնում է Աստծուն եւ հենց տաճարում էլ ավանդում հոգին: Տաճարի մեջ Տիրոջը գոհություն է հայտնել նաեւ Աննա մարգարեուհին, պատմել մանկան մասին: Համաձայն Եկեղեցու հայրերի բացատրության՝ Սիմեոնը եւ Աննան խորհրդանշում են Փրկչին ընդառաջ դուրս եկած Հին Ուխտի ողջ մարդկությանը:

Տյառնընդառաջի ծիսական արարողություններն սկսվում են փետրվարի 13-ի



երեկոյան ժամերգությամբ: Հավատացյալները տոնին մասնակցում են ձեռքերին օրհնված մոմեր պահած, որոնք արարողության ավարտին վառում են եկեղեցու կանթեղներից եւ տանում՝ լուսավորելու իրենց տները: Այս ամենը հիշեցնում է լույսի տոնախմբություն՝ խորհրդանշելով Սիմեոնի՝ Հիսուսին տված «Լույս» անունը: Իսկ խարույկ վառելն ու նրա շուրջը պտտվելը կամ վրայից թռչելը տոնի ժողովրդական ավանդույթներից են: Երբ Հիսուս Զրիստոսին տաճար տարան, Երուսաղեմի ժողովուրդը Փրկչին դիմավորեց ջահերով ու կրակներով: Հենց դա է խորհրդանշում վառվող խարույկը: Վառելով Տյառնընդառաջի կրակը՝ ուզում ենք, որ մեր հոգիները լուսավորվեն աստվածային լույսով, ինչպես բակն է լուսավորվում կրակով: Եվ եթե հեթանոսները կրակը պաշտում էին իբրև աստված, ապա քրիստոնյաները, որպես Աստծո ստեղծագործություն, Աստծուն են մատուցում, Ով Եկավ «երկրի վրա կրակ գցելու» (Ղուկ. ԺԲ 49)՝ ի Զրիստոս մկրտվողներին մյուսներից բաժանելու:

Եթե հեթանոսներն Աստծու պատիվը կրակին էին տալիս, ապա քրիստոնյաները կրակը, որպես Զրիստոսի ծառա, բերում են Նրան ծառայեցնելու:

Այս տոնի խորհուրդը Տիրոջն ընդառաջ

գնալու հրավերն է. ինչպես Նա՝ Զրիստոսը, խոնարհվեց ու դեպի մեզ եկավ՝ մեր փրկության համար, այդպես էլ մենք պետք է գնանք Նրան ընդառաջ՝ աստվածահաճո գործեր կատարելով, մեր կյանքը Նրան նվիրելով, քայլելով Նրա ճանապարհով եւ դրանով արժանի դառնալով Տիրոջ պատկերին ու նմանությանը: Մարդացած Փրկչին ամեն պահ դիմում է մեզ. «Եկեք Ինձ մոտ, բոլոր հոգևածներդ ու բեռնավորվածներդ, եւ ես ձեզ կհանգստացնեմ» (Մատթ. ԺԱ 28): Հաջորդ քայլը մերն է: Յուրաքանչյուրս պետք է անսանք Տիրոջ ձայնին, քանզի ով Նրա հետեւից է գնում, «խավարի միջով չի քայլի, այլ կընդունի կյանքի լույսը» (Հովհ. Ը 12): Զրիստոսը հաղթեց մեղքի ու խավարի իշխանությանը, Նրա մարդկությունը խոնարհվեց աստվածությունը, ու աստվածությունը բարձրացավ մարդկությունը, մենք փրկվեցինք ու հաշտվեցինք Տիրոջ հետ: Նա ճշմարիտ ազատություն պարգեցեց մեզ՝ աճելու եւ զարգանալու Իր անսպառ շնորհների տակ եւ լինելու Աստծո արքայության որդիներն ու ժառանգորդները: Ամեն հավատացյալ, ով խոնարհվում է Նրա անզուգական պատարագի ու խաչի առաջ, բարձրանում է եւ արժանի լինում Աստծո արքայությանը: Զրիստոսն է լույսի եւ ճշմարտության հավիտենական աղբյուրը, որից բխել են աշխարհի բոլոր ճշմարտությունները: Իրենով դեպի արքայություն դիմողին Նա պարգեւում է աստվածային շնորհներն ու երջանկությունը: Նա օրհնակ է մեզ՝ Իրեն հետեւելու, որ բարոյականությունը, առաքելի կյանքն ու աստվածսիրությունը ոչ թե կեղծ փարիսեցիների պես արտաքուստ ցույց տրվեն, այլ բխեն մարդու ներքին աշխարհից ու համոզմունքից: Նրա մեջ էին մարմնացած առաքելությունը, հեզությունն ու խոնարհությունը, կատարյալ ներդաշնակությունը կյանքի, զգացմունքի ու կամքի: Վեհություն ու պարզություն, ճշմարտության խստություն ու հայրական քաղցրություն, հեզություն եւ արիություն, խոնարհություն ու հաստատամտություն, կարեկցություն ու սեր, արդարություն, աստվածսիրություն, ընկերասիրություն, եւ այս ամենը թե՛ ընկերների, բարեկամների, գիտնականների, թե՛ թշնամիների ու տգետների հանդեպ:

Շարունակությունը՝ էջ 7

ՀԱՅՈՒՆ ԿԱՏՈՒՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԼԵՔՍԱՆԴՐ Վ ՉՈՒՂՅԵՇԻ (1706-1714)

Սկզբը՝ 2011-ի թիվ 24, 2012-ի թիվ 1-2

Իսրայել Օրու՝ ազգային այդ նշանավոր գործի մասին հայկական աղբյուրները զարմանալիորեն ոչինչ չեն հայտնում: Օտար դիվանների մեջ պահպանված թղթակցությունները, մասնավորապես Կարապետ Եզյանցի կատարած քննությունը, որը մի սովոր հատորով հրատարակվեց 1898-ին՝ պարունակելով 300-ից ավելի նամակ ու այլ վավերաթուղթ, ցույց են տալիս, որ նրա վաղա-

ժամ մահը խանգարեց գործնական արդյունքի հասցնել իր ձեռնարկը: Նա 1680-ից մինչեւ 1711 թվականն անխոնջ աշխատեց Հայաստանի ազատագրության համար, հանդիպեց այնպիսի դժվարությունների, որոնք կարող էին հուսահատեցնել ուզած գործիչ: Օրին եղավ հայկական պետականությունը վերածնելու ծրագրի իսկական դրոշակակիր: Նա շուտ հեռացավ կյանքից եւ իր գործունեության արդյունքը չտեսավ, սակայն նրա ծրագիրն ու ցանած սերմերը հայտնվեցին պարարտ հողում՝ ու գետրության աղբյուր դառնալով հայ ազատագրական շարժման գործիչների համար: Թերեւս կարելի է նրան քննադատել դավանափոխության պայմանին համակերպվելու համար, սակայն այդ մեծ գաղափարը եւ նրա աշխարհիկ անձ լինելը նրան շատ էլ մեղավոր չեն դարձնում, քանի որ պայմանն ստիպողական էր կաթոլիկ աշխարհի կողմից, եւ այն չընդունելն ի չիք էր դարձնում Հայաստանի ազատագրության ամեն մի հնարավորություն: Հարկ է խոստովանել, որ Օրին շատ ճկուն անձնավորություն էր, եւ երբ նրա՝ պֆալցյան ծրագիրը դարձավ անգործադրելի ու անիրական, նա

անմիջապես դիմեց Ռուսաց ցարի օգնությանը, որը նրա առաջ կրոնափոխության կամ, որ ավելի ճիշտ է, դավանափոխության պայման առաջ չբաշեց: Օրին, փաստորեն, հիմք դրեց հայերի ռուսական կողմնորոշմանը՝ դրա իսկական առումով: Օրին կողմնորոշումը չէր հասկանում որպես մի որեւէ գերտերության կառուցել լծվելու ստրկամիտ գաղափար, այլ քաղաքականություն, որի նպատակն էր լինել հայոց ազգային խնդիրների լուծումը:

Միևս վարդապետ Տիգրանյանը, որ շարժման առաջին իսկ օրերից եղել էր Օրու գործակիցը եւ ուղեկցել նրան այդ ամբողջ շրջանում, Օրու մահից հետո դարձավ նրա գործի շարունակողը՝ առավելապես զբաղվելով հայ-ռուսական հարբերություններով: Նրա պատրաստվածությունը բարձր չէր, օտար լեզուների իմացությունն էլ՝ անբավարար, ուստի ի վիճակի չէր եվրոպական արքունիքներին շահագրգռելու Հայաստանի ազատագրության խնդրով: 1711-1714 թթ. նա մնաց Աստրախանում՝ անընդհատ տեղեկություններ հաղորդելով աֆղանների ապստամբության մասին, որը շոշափում էր Պարսկաստանի կացության խնդիրը եւ սպառնում Սեֆյան Պարսկաստանի գոյությանը: Ստեղծված կացությունը մեծապես հետաքրքրում էր ռուսական արքունիքին, եւ 1715 թ. Պարսկաստան ուղարկվեց Արտեմ Վոլինսկին, որին հրահանգված էր տեղեկություններ հավաքել այ


ժողովրդի վերաբերյալ: Իսկ ռուսաց արքունիքի հետաքրքրությունը բարձրացնողը Միևս վարդապետն էր:

Մինչ տեղի էին ունենում վերը հիշատակված իրադարձությունները, Ավետիք պատրիարքը 1706 թվի դեկտեմբերից բանտարկված էր մոմ Սբ Միքայելի վանքում՝ ֆրանսիացի թագավոր Լյուդովիկոս ԺԴ-ի հրամանով: Հոմոսի Կղեմես ԺԱ պապը թախանձագին խնդրում էր, որ Ավետիքին ավելի ճշեցնել, իսկ ֆրանսիական թագավորի վրայից ջնջել Ավետիքին հալածելու բիծը՝ պարզապես անհնար էր, քանի որ Ավետիքի ձերբակալությունն ու բանտարկությունը կատարվել էին նրա հրամանով: Ավետիքը շղթայակապ վիճակում էր եւ չէր կարող հարաբերություն ունենալ որեւէ մեկի հետ՝ բացառությամբ Մոնֆրեր Ժուլիենի: Վերջինս, Ավետիքի իսկ խոսքերով, խիստ անողորմ էր եւ կերակուր բերելիս նրան հերետիկոս ու հերձվածող էր անվանում: Գիշերները նրան լույս չէին տալիս, եւ Ավետիքը միշտ մթության մեջ էր անցկացնում: Ավետիքն անգամ կարծում էր, թե ժուլիենը հակառակ իր ղեկավարների կամքի է իրեն հալածում, սակայն դա ճիշտ չէր, քանի որ կաթոլիկ կրոնավորն իր ղեկավարի կամքին հակառակ գործել չէր կարող: Դա սովորական խաղ էր, որ նպատակ ուներ խաբելու ու թյուրիմացության մեջ գցելու Ավետիքին: Ավետիքն անգամ նշում է, որ իր խցի վերելում գտնվող մեզն իր գլխին



եր թափում, եւ բանտապանները դա չէին արգելում: Ավետիքը խիստ վիրավորվում էր հատկապես իրեն հերետիկոս եւ հերձվածող կոչելուց: Լեզուն չգիտեր, ուստի բողոքել չէր կարող եւ օրհնություն լաց էր լինում եւ վիրավորանքից երբեմն երկու-երեք օր հրաժարվում ուտելիքից: Նրան ստիպում էին դավանափոխ լինել, եւ հալածվում էր պահքը եւ ծոմը լավ պահելու համար, ինչպես ընդունված էր հայերի մոտ: Որոշ ժամանակ անց սկսում են նրան կիրակի եւ տոն օրերին տանել վանքի մատուռ՝ պատարագ լսելու, սակայն այնտեղ էլ նրան՝ որպես խորշելի անձնավորության, առանձնացած էին պահում: Բանտարկության վերջին շրջանում ժուլիենին տեղափոխում են այլ վանք, եւ նրան փոխարինում է Սաքմո միաբանը, որն Ավետիքի իսկ հաղորդմամբ՝ չէր խոսում, հետեւաբար եւ չէր նախատում:

Շարունակությունը՝ էջ 4



ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍՎԱՈՐՉԻ ՊՎՇՏԱՍՈՒՆՔԻ ՎՐԳԵԼՔԸ ՎՍՈՐԻ ԿՎԹՈՂԻԿՈՍՆԵՐԻ ՕՐՈՔ ԵՎ ՆՐՎ ՎՆՎԱՆ ՇՈՒՐՋ ԵՂՎԾ ԽՈՐՀՐԴՎՈՐ ԼՈՒԹՅՈՒՆԸ Վ ԴՎՐԻ ԿԵՍԵՐԻ ՆՎՅ ՄՎՏԵՆՎԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ



Սկզբը՝ թիվ 2

Լույսիսկ Փավստոս պատմիչը, որ Խորենացուց առաջ քաջածանոթ էր Գրիգոր Լուսավորչին եւ նրան փառաբանող Ազաթանգեղոսի Պատմությանը, միեւնոյն էջում Տրդատ թագավորին անվանում է «նախածանոթ Զրիստոսի հավատքին» եւ «առաջընծա Զրիստոսի», իսկ Գրիգոր Լուսավորչին՝ միայն «յառաջեպիսկոպոս» եւ «նախավաստակ»։ «Սոյնպէս եւ գիշատակս թագաւորին Տրդատայ թէ կամօք թէ ակամայ, որ արծանին լեալ էր նախածանօք՝ ՚ի Զրիստոսն հաւատոց: Վասն այտորիկ կամ եղէն աշխարհին զնախնեաց ժամանակին հարանց եպիսկոպոսաց գայս տեղիս պատուել, ուր սոքա եղեալն էին. զի սիրելի էր աշխարհին, պատուել զյառաջընծայն Զրիստոսի զթագաւորն իւրեանց Տրդատ: Սոյնպէս եւ զյառաջեպիսկոպոսն զնախավաստակն զԳրիգորիս» (Փաւստոսի Քիւզանդացոյ Պատմութիւն Յայոց. բնագիրը Բ. Պատկանյանի, Երեւան, 1987, Ա, ԺԴ, էջ 60):

Որ եղիշեն Տրդատի վերաբերյալ տվյալները, իրոք, քաղել է Ազաթանգեղոսի մեր ձեռքը հասած Պատմությունից, հաստատվում է եւ այլ գործը փաստարկներով, որոնք նույնպէս վրիպել են մեր կորովի հայագետի եւ նրան հետեւողների ուշադրությունից: Վերոհիշյալ Թղթում Յայոց ժողովի մասնակիցները, դարձյալ, իբրեւ անցյալ սերտ բարեկամության օրինակ, հիշեցնում էին Թեոդոս կայսրին, որ նրա առաքինի նախնիները, Եվրոպայում եւ Ասիայում վիթխարածավալ տերության հասնելով, «այդչափ մեծ իշխանության մեջ մեծ եւ սիրելի դաստակերտ էին անվանում մեր հայոց աշխարհը» - «եւ յայնչափ մեծ իշխանութեան՝ դաստակերտ մեծ եւ սիրելի զՅայոց աշխարհս անուանեին» (Եղիշէ, էջ 72):

Եղիշէի եւ Ազաթանգեղոսի աղերսը ժխտող բանասերների համար միանգամայն անհավանական հայտնություն կարող է թվալ, եթէ պարզվի, որ այստեղ եւս Եղիշէի աղբյուրն Ազաթանգեղոսն է: Եվ, սակայն, դա այդպէս է - Ազաթանգեղոսի Պատմությունն է այն Մատյանը, որ վկայում է, թէ, իսկապէս, դեռեւս Տրդատ Մեծ թագավորի հեթանոսության շրջանում, որ ճիշտ համընկնում է Թեոդոս կայսր առաքինի նախնիների ժամանակին, Յայաստանը կոչվելիս է եղել «դաստակերտ կայսերաց»: Այդպէս կարողում ենք Տրդատ արքայի հրովարտակում՝ ուղղված Մեծ Յայքի ժողովրդին՝ մեծամեծներից մինչեւ շինականները - «քաջութիւն հասցէ ձեզ ի քաջէն Վահագն ամենայն Յայոց աշխարհիս. Իմաստութիւն Յունաց հասցէ դաստակերտիդ կայսերաց» (Ազաթ., §127): Ուշագրավ է, որ «դաստակերտ... զՅայոց աշխարհս անուանեին» եւ «Վասն որոյ եւ նախնին մեր Տրդատիս» հատվածները՝ երկուսն էլ Թեոդոսի ուղղված Յայոց ժողովի Թղթից են: Այս երկու՝ իրար հաջորդող հատվածները կասկած չեն թողնում, որ Եղիշէն դաստակերտ կայսերաց կարդացել է հենց Տրդատի հրովարտակում: Իր բնույթով եզակի սույն փաստը միանգամից անբախտելիորեն կապում է Եղիշէի եւ Ազաթանգեղոսի պատմական Մատյանները միմյանց հետ, որից հետեւում է, որ Ավարայրի պատմիչը, եթէ նա իրոք հիշյալ Յայոց ժողովի Թղթի հեղինակն է, քաջատեղյակ է եղել Ազաթանգեղոսի Յայոց պատմությանը եւ եապէս օգտվել է նրանից: Նույնիսկ եթէ Յայոց ժողովի Թուրքը Եղիշէի գրչի արգասիքը չէ, միեւնոյն է՝ խնդիրն այդ դեպքում եւս շահեկան լուծում է ստանում հոգուտ Ազաթանգեղոս-Եղիշէ աղերսի, կնշանակի՝ Եղիշէի Պատմության միջոցով մեզ հասել է մի վավերական Թուրք, որից ակնհայտ երեւում է, որ դեռ 451 թ.՝ Ավարայրի նախօրէին, Յայոց մեծամեծ նախարարներն ու եպիսկոպոսներն ընթերցել են Ազաթանգեղոսի Պատմությունը եւ նրանից պատմական տվյալներ քաղել Թեոդոս կայսրը հղած Թուրքը գրելիս:

Եվ այսուամենայնիվ, Եղիշէի Վարդանանց պատմության գանազան մասերի բաղդատումն Ազաթանգեղոսի Պատմության հետ վերջնականապէս ի հայտ է բերում այն իրողությունը, որ հենց ինքը՝ Եղիշէն, քաջածանօթ է եղել Տրդատ թագավորի եւ Գրիգոր Լուսավորչի պաշտպանութեան ոչ թէ հիշյալ Յայոց ժողովի Թղթի միջոցով կամ ուրեւ է այլ՝ մեզ անծանօթ աղբյուրից, այլ անմիջապէս մեր ձեռքը հասած Ազաթանգեղոսի Պատմությունից, եւ Վարդանանց պատմությունը շարադրելիս հմտորեն օգտվել է նրա պերճ ու ծաղկուն ոճերից:

Եղիշէ-Ազաթանգեղոս աղերսն ամբողջացնելու համար կարելի է մատնացույց անել բազմաթիվ լեզվաոճական նույնություններ ու նույնանման ինքնատիպ դարձվածներ նաեւ Եղիշէի Պատմության ամենատարբեր մասերից: Մի շարք նմանաճանաչ արտահայտություններ ու դարձվածներ գտնում ենք Ազաթանգեղոսի ու Եղիշէի հենց առաջին էջերում, կարծես Վարդանանց պատմիչն իր երկը շարադրելուց առաջ աչքի է անցկացրել Ազաթանգեղոսի Պատմության մանավանդ Առաջաբանը եւ Առաջին գիրքը, ուստի Վարդանանց պատմության սկիզբն էլ հատկապէս ճիշատ

գած է Ազաթանգեղոսի ոճերով: Ընդ որում, աչքի է զարնում Ազաթանգեղոսի եւ Եղիշէի պատկերավոր մտածողության հարազատությունը, որը հաճախ արտահայտվում է նույնանման համեմատություններով: Ուշագրավ է, որ մրրկածին օղովք հազվադէպ կապակցությունը երկու հեղինակներին մոտ էլ գործածված է հենց Առաջաբանի սկզբնամասում.

Ազաթ., §1
«...ի մեջ ընդոստուցեալ ալեացն որ ընդդէմ դառնան, մրրկածին օղովքն ի մարտ պատրաստին...»:
Եղիշէ, էջ 5
«...եւ իբրեւ բարձրաբռնիչս եղեալ՝ զամենայն վնասակար մրրկածին օղովք անցանիցեմք...»:
«(Մրրկածին օղովք) արտահայտություն ունի նաեւ Գյուտ կաթողիկոսը):»

Ազաթանգեղոսի Առաջաբանում մարդու լսելիքը (սակնջները) պատկերավոր կոչված է **աման պատգամաց** (պատգամների անոթ). սրան հար եւ նման Եղիշէն մարդու գլուխն անվանում է **աման խորհրդոց** (մտքերի անոթ).

Ազաթ., §11
«...միայն յօժարութիւն կամաց սրտին՝ սիրով մատուցանել գլսելիս, հաւատովք ձգտեալ զականջս՝ աման պատգամաց...»:
Եղիշէ, էջ 47
«...ամ չհանդուրժել սրտին իւրոյ՝ կոտորել զգօրութիւն մարմնոյն, եւ ծաւկոտել զբազմամթեր աման խորհրդոցն...»:

Կողք կողքի ցուցադրենք եւս մի քանի նմանատիպ, նմանաճանաչ արտահայտություններ.

Ազաթ., §22
(Յայոց Խոսրով Մեծ թագավորը Արտաշիռի դէմ տարած հաղթանակի առթիվ)
«...իրաման տայր ընդ կողմանս կողմանս դէսպանս արձակել, հրովարտակս անել, յեօթն բազինս մեհենիցն ուխտաւոր լինել պատկերաց կոռց դիցն պաշտաման: Սպիտակ ցուրք եւ սպիտակ նոխազօք, սպիտակ ձիովք եւ սպիտակ ջրուովք... ոսկովք պսակօք եւ արծաթի զոհարանօք, յանօթս ցանկալիս ակամբք պատուականօք... զհիւր ազգին Արշակունեաց զհայրենեացն պաշտամանց տեղիս մեծարեր: ...եւ մեծամեծ պարգէս քրմացն շնորհեր»:
Եղիշէ, էջ 12
(Պարսից Յազկերտ արքայից արքան հռոմեաների եւ հոնների դէմ տարած հաղթանակի առթիվ)
«...աւետաւորս առաքեաց ընդ ամենայն ատրուշանս աշխարհին իւրոյ, ցուրք սպիտակօք եւ զհատար նոխազօք առատացոյց զզոհս կրակի, եւ խիտ առ խիտ թանձրացոյց անդուլութեան իւրոյ. պսակօք եւ պատուովք մեծարեաց զբազումս ի մոզաց եւ զբազմագոյնս ի մոզպետաց»:
Շարունակությունը՝ էջ 6

ՎԱՅՈՒՅ ԿԱՅՈՒՄՆԵՐՈՒՄՆԵՐ ՎԼԵՔՍԱՆԴՐ Կ ԳՈՒՐՎՅԵՉԻ (1706-1714)

Սկզբը՝ էջ 3
Իսկ 4. Պոլսում Ավետիք պատրիարքին չէին մոռացել, եւ նրան գտնելու ջանքեր էին գործադրվում: Եկեղեցիներում երեկոյան աղոթքներ էին կարդացվում՝ նրա վերադարձի համար: Խոսակցություններ էին շրջում՝ Ռոդասթյուն նրա գտնվելու մասին, եւ շատերը զնում էին այնտեղ՝ նրան տեսնելու: Մեկ ուրիշը հայտարարում էր, թէ նրան տեսել է Յոլանդիայում եւ դրա համար պարգեւներ էր ստանում: Երկու թուրք գերի հայտարարում են, թէ իբր նա Մալթա կղզում է բանտարկված, եւ մի քանի հարուստ հայ հատուկ նավով Մալթա է մեկնում: Դեսպան Ֆերիոլն այդ ամենի մասին տեղյակ է պահում թագավորին, որն ականջալուր է լինում այն բանին, թէ Ավետիքին փնտրելու համար մարդիկ են եկել Լիվոնիս եւ հետո էլ անցնելու են Ֆրանսիա: Այս ամենը լով


մեծացնում են կասկածները, եւ 1709 թ. դեկտեմբերի 28-ին Ավետիքին տեղափոխում են Բաստիլ, այսինքն՝ Փարիզի արքունական բանտ: Մ. Օրմանյանն Ավետիքի նշած թվին կասկածում է, քանի որ բանտի արձանագրությունների մեջ նշված է դեկտեմբերի 18-ը: Ավետիքի անունն անգամ գաղտնի է պահվում: Ավետիքին շղթայակապ բանտարկում են ստորին հատվածում՝ գետնափոր նկուղներից մեկում, որտեղ մնում է 40 օր: Նրա առողջական վիճակը խիստ վատանում է. ստամոքսի ցավից ու հագից նա գրեթէ ուշաթափվում էր: Բանտի վերատեսուչ Բեռնավիլը բժշկել է հրավիրում եւ հոգ տանում նրան: Յավանբար բժշկի խորհրդով 1710 թ. փետրվարի վերջերին նրան տեղափոխում են միջին քավարանի բանտը: Չնայած բանտային պայմանները մի փոքր տանելի են դառնում, սակայն դավա-


նափոխության ստիպումները շարունակվում են, որ իբր կաթոլիկ դառնալով՝ հնար կլինի նրան բանտից ազատել: Այդ նպատակով նրա մոտ են ուղարկում արքա Ռնոդոթին եւ թարգման մայր Լաբրոային, որը մի լեզվագետ հայ էր՝ Խաչատուր անունով: Իսկ Լաբրոան պարզապէս Խաչատուրի թարգմանությունն է: Նա Բաստիլում վստահելի անձ էր եւ կարգվել էր թարգմանների ղեկավար: Ավետիքի հետ շփվել են նաեւ բանտապահ Միշելը, կերակուր բերող Անտուանը եւ բժիշկը, որի անունը չի արձանագրված: Եվ այսպէս Ավետիքը չորս տարի տանջվում էր բանտարկության մեջ՝ հուսալով, որ իր յուրայինները միջոց կգտնեն իրեն ազատելու: Բայց օգնություն չկար, նա կորված էր աշխարհից, հիվանդությունները քայքայում էին առողջությունը, պակասում էր հոգու կորովը: Նրան տալիս էին կարդալու հռոմեականության ոգով գրված գրքեր, իսկ Ռնոդոթը հմտորեն առաջ էր տանում իր գիծը: Ավետիքին թույլատրում են գրառումներ կատարել, անգամ արտագրել տպագրված գրքերը, որոնք դեռ պահվում են Փարիզի ֆրանսիական մեծ գրադարանում:

Ընդօրինակված գրքերից են եղել Ռոբերտոս Բելարմինոսի, Կղեմես Գալանոսի աշխատություններից երկուսը եւ Նոր Կտակարանի՝ ամստերդամյան 1668 թ. հրատարակությունը, որոնցից առաջինի վրա պահպանվել է 1710 թ. հունիսի 9/20 թվականը, իսկ վերջինի վրա՝ օգոստոսի 3/14 եւ 27 թվականները, ինչը ցույց է տալիս, որ այդ ժամանակ նրան թույլ են տվել գրառումներ կատարել: Ընդօրինակումներից գատ, նա հիշատակարաններ է թողել, որոնք նրա արկածների եւ կենսագրության մասին տեղեկություններ են պարունակում: Դրանք են, որ գաղափար են տալիս նրա ողիսականի վերաբերյալ: 1710 թ. օգոստոսի 23-ին նա գրել է, որ չորս տարի եւ ութ ամիս է, ինչ գտնվում է բանտում, այսինքն՝ նրա բանտարկությունը տեղի է ունեցել 1706 թ. սկզբներին, երբ նա դուրս էր եկել 4. Պոլսից: Նա իր գրառումներում շատ զգուշավոր է ֆրանսիացի եւ ֆրանսիական պաշտոնյաների մասին խոսելիս՝ անշուշտ վախենալով, որ թարգմանի միջոցով դրանք կարող են հաղորդվել իշխանություններին եւ վտանգ ստեղծել իր համար: Ուստի միշտ

աղոթում է Լյուդովիկոս ԺԴ-ի համար եւ գովում նրան, որին Լույս կամ Լույսը (Louis) է կոչում: Նա հարգանքով է խոսում նաեւ մոնսիյոր Բոնշարթրի եւ Փարիզի կարդիմալ Նոայլի մասին՝ հույս ունենալով, որ կփափկացնի նրանց սրտերը: Մինչեւ 1710 թ. օգոստոսի 23-ը նա տակավին հայադավան էր:

Շարունակելի
Բաբկեն ՅԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
33 ԳԱՍ թղթակից անդամ,
պրոֆեսոր





Սկիզբը՝ թիվ 2

Գործառույթներ

Հայ բանավոր ավանդության մեջ ս. Սարգսից հանդես է գալիս մի շարք հատկանիշներով, որոնք նրան դարձնում են բազմագործառույթ սուրբ:

Վերելում արդեն առաջ բերվեցին սրբին տրվող մի քանի մակդիրներ, որոնց մի մասը, ինչպես տեսանք, սերում է սրբի գրավոր վկայաբանությունից: Արդ տեսնենք սրբի մյուս մակդիրներն ու հատկանիշները:

Վերելում արդեն նշվեց սրբի «ատենահաս» մակդիրը, որը բուն ժողովրդական է եւ մատնանշում է նրա՝ ժամանակին հասնողի, օգնողի, գորավիզ կանգնողի բուն հատկանիշը: Սա սր Սարգսի հիմնական գործառույթն է՝ կապված նրա պաշտամունքի հետ: Այսինքն՝ սուրբը ժամանակին հասնում է, օգնում,

փրկում նրանց, ովքեր հավատում են նրան, աղոթում, կատարում են ծիսական հատուկ արարողություններ, ուստի եւ իրավասու դառնում դիմելու նրան եւ օգնություն խնդրելու:

«Ատենահաս» մակդիրն իմաստով առնչվում է ս. Սարգսին տրվող «մուրազատու» (=փափագակատար) մակդիրին, որը տրվում է նաեւ այլ սրբերի: Բայց ս. Սարգսի դեպքում այդ մակդիրն ունի առավել որոշակի իմաստ եւ կապվում է սիրո եւ ամուսնության փափագի կատարման հետ եւ այդ առումով դառնում է սրբին բնութագրող ամենակարեւոր հատկանիշը:

Բանավոր ավանդության մեջ սիրահար զուգրերի կողմից ս. Սարգսին ուղղված հաճախակի հնչող աղերսական բանաձեւն է՝

«Սուրազատու՛ սուրբ Սարգիս, Ղու հասնիս (տարբերակ՝ հաստս) մըր Երկուսիս»:

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՎՈՐ ԱՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ըստ Սարգիս Դարությունյանի «Բանագիտական ակնարկներ» գրքի

Սիրահարներին միմյանց հասցնելու, իրար հետ ամուսնացնելու այս բաղձանքը, որ աղերսվում է ս. Սարգսից, բանավոր ավանդության մեջ ունի իր պատճառակցված (էթնոլոգիական) գրույցը, որը դարձել է առասպելական նախադեպ ս. Սարգսի հիշյալ գործառույթի: Ըստ այդ գրույցի՝ թշնամի թագավորը գործով ելնում է Ուռնմի (հունաց) թագավորի վրա եւ վերջինիս նեղը գցում: Հույների թագավորը հայոց թագավորից օգնություն է խնդրում: Հայերից Սարգիս անունով մեկը իր գործով հասնում է օգնության եւ մեծ քաջագործությունների գևով ազատում հույներին: Հույների թագավորը, վախենալով Սարգսի գործությունից, պատվիրում է վերջինիս գործից կենդանի մնացած քառասուն զինվորներից յուրաքանչյուրին տալ մի աղջիկ, հարբեցնել եւ գիշերն այդ աղջիկների ձեռքով սպանել յուրաքանչյուրին: Կեսգիշերին 39 աղջիկներն սպանում են 39 զինվորներին, բացառությամբ՝ Սարգսին բաժին ընկած աղջկա: Վերջինս, ափսոսալով գորավարին, կողքին նստած լաց է լինում. արցունքներն ընկնում են քնած Սարգսի դեմքին, եւ նա արթնանում է ու զարմացած հարցնում լացի պատճառը: Աղջիկը պատմում է եղելությունը եւ շտապեցնում Սարգսին միասին փախչելու: Սարգիսն ու աղջիկը ծնկի են գա-

լիս, Աստված կանչում: Աստծո գործությամբ բուք ու քամի է բարձրանում, Սարգիսն աղջկան առնում է իր բոզ ձիու գավակին, ձիով քաղաքի պարսպից դուրս թռչում ու միասին գալիս Հայաստան աշխարհի (տե՛ս Ղանալա-Նյան, 1969, 365-366):

Այս գրույցով մի կողմից պատճառաբանվում է բուք ու քամու առնչությունը ս. Սարգսի հետ՝ իբրեւ աստվածային տուրք, փրկության միջոց, մյուս կողմից՝ իրեն սիրահարված հույն աղջկան փախցնելու մոտիվով գրույցը դառնում է առասպելաբանական նախադեպ ու նախօրինակ ս. Սարգսի կողմից սիրահար զուգրերին իրենց մուրազին հասցնելու հավատալիքի:

Սրբի կողմից սիրահարներին իրենց մուրազին հասցնելու գործառույթը ցայտուն արտահայտություն է գտել «Աշուղ Ղարիբ» սիրավեպում, որի թիֆլիսյան տարբերակը 1885-ին հրատարակել էր Գեորգ Տեր-Աղեքսանյանը՝ իր «Թիֆլիսեցոց մտավոր կյանքը» ժողովածուում: Ըստ այդ տարբերակի՝ աղքատ աշուղ Ղարիբը սիրում է մի հարուստ աղջկա՝ Շահասանամին: Վերջինս եւս սիրում է նրան, բայց հայրը հավանություն չի տալիս նրանց ամուսնությանը եւ մտադրվում է աղջկան ուրիշի կնության տալ: Աշուղ Ղարիբը գնում է օտարունակի փող դատելու եւ հարստանալու նպատակով՝ հրաժեշտի

ժամանակ խնդրելով աղջկան, որ յոթ տարի հետո թող ամուսնանա ուրիշի հետ, եթե ինքը չվերադառնա: Յոթ տարի անց վերադարձի ճանապարհին նա գգում է, որ ուշանում է. վերջին օրն է, բայց դեռ մի քանի օրվա ճանապարհ ունենալով: Հուսահատված նա ս. Սարգսին օգնության է կանչում: Վերջինս իսկույն հայտնվում է, Աշուղ Ղարիբին առնում ձիու գավակին, մի ակնթարթում հասցնում հայրենի քաղաք, ուր նա ամուսնանում է Շահասանամի հետ:

Ս. Սարգսի սիրո եւ ամուսնության փափագակատարի այս գործառույթը՝ նրա կերպարի արտաքին նկարագրին զուգակցված, դրսևորում է գտել վերելում արդեն հիշատակված ժողովրդական երգում, որը բերում ենք ամբողջությամբ.

Սուրբ Սարգիսն էր խըռ ծիավոր, Ձեռքի մըզրախս փունջուխլավոր, Առավ թռավ զոր սիրու կաքավ, Սիրու ճանապախ մըզի տվավ: Սուրբ Սարգիսն էր մեծ գորավոր, Ձահեյ-ջիվան, ինք ծիավոր, Տուշմնին հաղթող՝ իր սուրբ հավտով, Ձինք ձենողին՝ շուտով հասնող: Զգի մենիմ, ով սըբ Սարգիս, Ձիել ձիովդ մըզի լե հասնիս, Թուփ մըզրախտվոդ իմ դատ էղնիս, Ձմըզի հասցուս մըր մուրազին:

Շարունակությունը՝ էջ 7



Անցյալ տարի Լոնդոնում բացվեց Իդա Զարի լուսանկարների ցուցահանդեսը, որը տեւեց չորս ամիս եւ օտարազգի արվեստագետների, արվեստասերների կողմից հետաքրքրության պակաս չունեցավ: Սակայն այսօր այս անունը գրեթե մոռացված է Հայաստանում: Ուրեմն, ո՞վ էր Զարը:

Ժամանակակիցները նրան սիրով ու գորովանքով «բոհեմական լուսանկարիչ» էին կոչում: Հայազգի անվանի լուսանկարչուհի Իդա Զարամյանը ծնվել է 1908-ին Ռուսաստանի Տոմսոկ քաղաքում: Ուսանողական տարիներին՝ 1920-ական թվականներին, Փարիզում ընկերների հետ զբաղվել է մոդեռն արվեստով: Զարի վրա մեծ ազդեցություն է թողել Փարիզի ավանգարդը: 30 տարեկանում Զարամյանը մեկնում է Եգիպտոս եւ միանում ընտանիքին, որտեղ էլ ամուսնանում է Եգիպտացի լուսանկարչի հետ:

1945-ին տեղափոխվում է Լոնդոն՝ երկրորդ ամուսնու՝ արվեստագետ եւ քննադատ Վիկտոր Մուսգրեյվի հետ: Ստիպում՝ 1 DOArblay փողոցում, Մուսգրեյվի պատկերասրահի բացման օրը Զարը ցուցադրում է «Զառասուն նկարիչ Լոնդոնից եւ Փարիզից» ֆոտոշարը (1954):

Սակայն Զարի հաջողության գագաթնակետը լավ ընդունելության արժանացած անհատական ցուցահանդեսն էր Whitechapel պատկերասրահում 1960-ին: Այս՝ շոնդալից հաջողություն ունեցած ցուցադրության ժամանակ ներկայացվել էին նաեւ Հայաստանում իրականացրած աշխատանքները:

1950-ականների վերջերին Զարը գալիս է Հայաստան, հանդիպում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Վազգեն Առաջինին: Մայր Աթոռում հիացմունքով ծանոթանում է հայ մշակույ-

ԻԴԱ ԶԱՐ՝ ԶՏԱՐՅՈՒՆ ԽԵՆԹԸ

թի գանձերին. հնամենի մատյաններ՝ լուսապակ մանրանկարներով, գեղանկարներ, որմանկարներ, գեղարվեստական մետաղագործություն...

Զարին հատկապես ոգեշնչել էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Երիտասարդ վարդապետներից մեկի՝ հայր Եղիշե Սարգսյանի կերպարը: Առաջին հանդիպումը Պատարագի պահին էր. Սուրբ Գիրքն ընթերցող հոգեւորականը խնամքով, գգուշությամբ, երկյուղածությամբ թերթում էր մատյանը:

- Մատները, ես պատկերացրի, նկարվելիք կադրի մեջ գլխավոր շեշտը մատները պետք է լինեն...

Առավել հաջող, անթերի ստացվեց սրբապատկերի ֆոնին արված կադրը: Երիտասարդ վարդապետի աչքերը խոսում են՝ թախծոտ, հատուկ կառուցվածքի կողմից անընդհատ «թխվող» խոչընդոտներից իմաստնացած, տագնապալի սպասումով, քանզի Հայ Եկեղեցու համար դժվար ժամանակներ էին կատարի անաստվածության երկրում: Լուսանկարը մեծ հաջողություն ունեցավ, ցուցադրության առանցքը դարձավ, եւ Վազգեն Վեհափառն անմիջապես գնեց այդ գլուխգործոցը:


Այդ ժամանակներից հետո շատ բան է փոխվել աշխարհում, փառք Աստծո՝ մեր երկրում, նաեւ տեր Եղիշեի կյանքում: Նա, հատուկ մեծ, անափ սիրո, հրաժարվեց կուսակրոն հոգեւորականի վեղարից: Վանեցի պապերից ժառանգած օրենքներով՝ ավանդական նիստուկացով, բայց նաեւ միմիայն իրեն ու հմայիչ տիկնոջը

բնորոշ խենթությամբ հյուսեցին իրենց ընտանեկան բույքը, որը խորհրդային խեղդող, գորանցային իրականությունից հոգնած մտավորականներից, արվեստագետներից շատերի համար կանչող, փրկարար հանգրվան էր դառնում:

Ողջ կյանքն անմնացորդ ու սիրով Հայ Առաքելական Եկեղեցուն նվիրաբերած տեր Եղիշե ավագ (ընդամենն իբրեւ աստիճան չպետք է ընկալենք) քահանա Սարգսյանը հիմա էլ նույն սիրով, խանդավառությամբ շարունակում է իր աշխատանքը: Հիշողությունների իր առեւի շտեմարանից երբեմն պատմափկներ է հրամցնում գրուցակիցներին, ու

ցուն, գործույնյա: Լուսանկարվելու պահին չարածիություններ էի անում. գլուխս բերում էր իր պատկերացրած թեքության ու մինչ կհասներ ապարատին, ես շարժվում էի: Նեղսրտում էր Իդան, բողբոջում Նորին Սուրբ Օծույթանքը: Հայերեն խոսում էր «Ֆրանսիական ակցենտով», բառերը մի քիչ ձգելով. «Վեհափառաաաղ, անհնազանդ է այս մարդը...»:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի աշխատակցուհի Մարինե Մխիթարյանը, որ քաջատեղյակ է այս պատմությանը, Իդա Զարամյանի գլուխգործոցի ֆոնի վրա նկարել է արդեն ծերունագարդ հոգեւորականին: Հետեւելով Սարգսյանի «Երեք



Լուսանկարը՝ Մարինե Մխիթարյանի

այդ պահերին աչքերը մեկ այլ փայլ են ստանում:

- Հիմա էլ մտապատկերիս մեջ հստակ է Զարի կերպարը՝ շարժուն, անսպառ էներգիայով լե-

հասակին՝ գուցե սա էլ կոչենք «Երկու հասակ», «Երկու պատկեր», որ ի մի են եկել բոլորովին տարբեր իրականություններից...

ԱՍԻ ԿՈՐՄԱԿԵՐԴՅԱՆ

ԿԻՑ սեմյակում

ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԱՌԱԿՆԵՐ «ՎՆԱՄԻՏ ՄԵԾՎԱԿՐՈՒՄՏԸ»

Մեր հյուրն է Բյուրավանի Սբ Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցու
հոգևոր հովիվ Տ. Ղազար քհն. ՊԵՏՐՈՍՅԱՆԸ

- Տե՛ր հայր, մինչև բուն առա-
կին անցնելը, անդրադառնա՞նք ա-
ռակին անմիջապես նախորդող
երկխոսությանը, ինչը պատճառ
եղավ, որ Հիսուսը պատմի այս ա-
ռակը: Մեկը տրտնջում է եղբորից,
որ ժառանգությունը իր հետ չի կի-
սում, եւ խնդրում է Հիսուսին, որ
օգնի, այսինքն՝ համոզի եղբորը
ժառանգությունը կիսելու: Եվ Տե-
րը, որ երբեք չէր զլացել օգնել
մարդկանց, մերժում է խնդրողին՝
ասելով, որ հնքը դատավոր չէ՝
նրանց վրա կարգված:

Տե՛ր հայր, նախ փորձենք ա-
վելի առարկայորեն հասկանալ
մերժման պատճառը, ինչո՞ւ Տերը
մերժեց խնդրողին:

- Հիսուսն ասաց, «Ինձ ո՞վ դա-
տավոր կամ բաժանարար կար-
գեց ձեզ վրա» (Ղուկ. ԺԲ 14): Այս-
տեղից պետք է հասկանալ, որ Տի-
րոջ առաքելությունը երկրավոր
դատավորությունը չէր: Տիրոջ խն-
դիրը փրկության լույսի ավետումն
էր, փրկության տնօրինության ի-
րագործումը: Այս եղբայրների
պարագայում Հիսուսն էր միջամ-
տության կարիքը չտեսավ, ավե-
լին՝ պարզորոշ ասաց, որ սխալ
կլիկն այդ միջամտությունը: Ի-
հարկե, Տերն ամեն բան կարող
էր: Եթե կարող էր հրաշքներ եւ
նշաններ կատարել, ծովի վրայով
քայլել, կույրերին աչքի լույս պար-
գել, կաղերին քայլեցնել եւ այլն,
կարող էր նաեւ այս հարցը որոշել:
Բայց... խնդրանքը մերժել դեռ չի
նշանակում անարդարություն
գործել, իսկ եթե խնդրանքն ան-
արդար էր, չա՞ր էր... Մյուս կող-
մից՝ Հիսուսը շատ մեծ հեղինա-
կություն էր վայելում, եւ շատ ու
շատ ճարպիկ մարդիկ պիտի
փորձեին օգտվել այդ հեղինակու-
թյունից: Մեր օրերում էլ քիչ չեն
սման երեսույթները, երբ որեւէ հե-

ղինակավոր մարդու ա-
նունը կամ խոսքը ճար-
պիկ մարդիկ օգտա-
գործում են՝ իրենց ճղ-
ճիմ նպատակներին
հասնելու համար: Այս
դեպքում երկու եղբայր-
ներ չէին կարողանում
փոխհամաձայնության
գալ ժառանգության
հարցում: Իսկ գուցե
խնդրողի՞ պատճառով,
ի՞նչ իմանաս: Եվ անհ
Հիսուսը հրաժարվում է՝
չխառնվելով նրանց
ներքին վեճին, ինչն ի-
րենք պարտավոր էին
լուծել սթափ մտքով, ա-
զահույթունից գերծ սր-
տով:

- Օրմանյան պատ-
րիարքն այստեղ առա-
վել կարեւորում է մերժ-
ման բարոյական պատճառը՝
ասելով, որ Հիսուսը շարունակ այս
աշխարհի բարիքներից հրաժար-
վելու եւ հոգեւոր բարիքներ որո-
նելու քարոզ ու պատգամ էր տա-
լիս մարդկանց: Եվ, ուրեմն, չէր
կարող երկու եղբայրների նյութա-
կան վեճը լուծել որպես դատա-
վոր: Զանի որ դա կնշանակեր քա-
ջալերել ազահույթունը: Սակայն
ումանք այս կեցվածքը կարող են
դիտել իբրեւ «պասիվ դիրքորո-
շում»:

- Իսկ ո՞վ ասաց, որ «պասիվ
դիրքորոշումը» չի կարող լինել ի-
մաստուն դիրքորոշում: Իսկապես
էլ, խոսքի վերջում նա հենց ազա-
հույթունից է զգուշացնում դիմո-
ղին եւ հավաքված ժողովրդին.
«Տեսե՛ք, որ զգույշ լինեք ամեն
տեսակ ազահույթունից, որովհե-



Ռեմբրանդտ. Ամիտո մեծահարուստը

տեւ մարդու կյանքը իր կուտա-
կած հարստության մեջ չէ» (Ղուկ.
ԺԲ 15):

Այս զգուշացումից հետո էլ սկ-
սում է պատմել առակը. «Մի մե-
ծահարուստի արտերն առատ
բերք տվեցին. եւ նա խորհեց իր
մտքում ու ասաց. «Տեսնեմ ինչ
կարող եմ անել, քանի որ բերքս
կուտակելու տեղ չկա: Գիտեմ,-
ասաց նա,- թե ինչ պետք է անեմ.
կընտրեմ իմ շտեմարանները եւ
ավելի մեծերը կշինեմ ու այնտեղ
կհավաքեմ ցորենը եւ իմ ամբողջ
բարիքները. ու ինքս ինձ կասեմ՝
ո՞վ մարդ, շատ տարիների համար
ամբարված բազում բարիքներ ու-
նես, հանգիստ արա, կե՛ր, խմի՛ր
եւ ուրախ եղի՛ր»: Աստված նրան
ասաց. «Ամի՛տ, հենց այս գիշեր
հոգիդ քեզնից պահանջելու են,
իսկ ինչ որ պատրաստել ես, ո՞ւմն

է լինելու»: Նույնպես է նաեւ
նա, ով իր անձի համար
գանձ կհավաքի եւ Աստծով
չի հարստանա» (Ղուկ. ԺԲ
16-21):

Առակի հերոսը մեծահա-
րուստն է, որի արտերն առ-
ատ բերք էին տվել: Նախ մի
հետաքրքիր դիտարկում.
մարդկային հասարակու-
թյան մեջ հնուց ի վեր եղել է
որոշակիորեն ձեւավորված
բացասական վերաբերմունք
նյութական հարստության եւ
հարուստների հանդեպ, ան-
գամ եթե սոցիալական շեր-
տավորումն այնպիսի աղե-
տալի չափերի չի հասել, ինչ-
պիսին արդի ժամանակնե-
րում է: Սակայն սխալ պիտի
լիներ նման վերաբերմունքը
միանշանակ արդար համա-
րելը. նյութական հարստու-
թյունն ինքնին ո՛չ չարիք է, ո՛չ էլ
չարիքի աղբյուր. այն չարիքի աղ-
բյուր դարձնողը մարդն է՝ Աստ-
ծուց հեռացած, եսակենտրոն
մարդը: Առհասարակ հոգեւոր
հարթության մեջ բոլորովին այլ է
պատկերացումը «հարուստ» եւ
«աղքատ» եզրերի մասին: Ըստ
այդմ՝ աղքատ չէ չունեւոր մարդը,
այլ աղքատ է այն մարդը, ով, ինչ-
պես մեր սուրբ հայրերն են ասում,
իր մեջ չի հաղթահարել հարստու-
թյան տենչը՝ անկախ նրանից, թե
որքան ունի: Նման մարդու կարո-
ղությունը մեծանալուն զուգըն-
թաց՝ մեծանում են նպատակներն
ու ծրագրերը: Եվ այսպես՝ շարու-
նակ... Եվ ի վերջո պարզվում է, որ
գերնպատակը միայն ու միայն
նոր, ավելի շատ հարստություն
կուտակելն է, ուրիշ ոչինչ... Այս-

պես ձեւավորվում է անհագու-
թյան, ազահույթան մոլորությունը:
Տեսե՛ք, թվում է, թե ի՞նչ վատ բան
կա, որ մարդու արտերն առատ
բերք են տվել, այնքան, որ բերքը
չի կարող տեղավորել եղած շտե-
մարաններում: Մտածում է հենքը
քանդել եւ նոր, ավելի մեծ շտեմա-
րաններ շինել, որ ամբողջ բերք ու
բարիքը տեղավորի: Կարծես թե
որեւէ դատապարտելի բան չկա.
մարդիկ հիմնականում հենց այդ-
պես էլ մտածում են: Բայց արի ու
տես, որ Տիրոջ աչքին խոտենե-
թվաց մեծահարուստի կեցվածքը:
Ինչո՞ւ: «Ինքս ինձ կասեմ՝ ո՞վ
մարդ, շատ տարիների համար
ամբարված բազում բարիքներ ու-
նես, հանգիստ արա, կե՛ր, խմի՛ր
եւ ուրախ եղի՛ր», - սա հստակորեն
արտահայտված նյութապաշտա-
կան մտածողություն է, եւ հենց
այս մտածողությունը դատա-
պարտեց Աստված: Թող էլ ինչ
շտեմարան կառուցեր, բայց իր
հույսն արդեն լիներ ոչ թե նյութե-
ղեն շտեմարանը, այլ մեծ ու ան-
հատակ շտեմարանը երկնային:
Այնինչ նա երկրի վրա էր գանձեր
դիզում: Ինչպիսի խաբկանք...
Գանձը կուտակեց եւ հենց նույն
գիշերն էլ հրաժեշտ տվեց այս
երկրային կյանքին: Ո՞ւմ մնաց
կուտակածը. անշուշտ՝ ո՛չ իրեն:

- Տե՛ր հայր, «կե՛ր, խմի՛ր, քե՛ֆ
արա» ապրելակերպն այսօր շա-
տերի համար է նպատակ դարձել:
Այսօրվա մեծահարուստներից
շատերը, օրինակ, «ո՞ւմ մնաց կու-
տակածը» հարցին կարող են պա-
տասխանել՝ զավակներին: Ի՞նչ
սխալ կա այս պատասխանի մեջ:

- Սխալի խնդիր չէ: Առաքյալն
ասում է. «Ձեր հարստությունը
փտած է, ձեր զգեստները՝ ցեցի
կեր, եւ ձեր արծաթն ու ոսկին՝
ժանգոտած, եւ նրանց ժանգը ձեր
դեմ որպես վկայություն պիտի լի-
նի եւ պիտի ուտի ձեր մարմինը՝
ինչպես կրակը. վերջին օրերի՞
համար գանձեր դիզեցե՞ք» (Յակ.
Ե 2-3):

Շարունակությունը՝ էջ 8

ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉԻ ՊՎԵՏԱՎՄՈՒՆԷՔԻ ՎՐԳԵԼԸ ՎՍՈՐԻ ԿՎԹՈՂԻԿՈՍՆԵՐԻ ՕՐՈՔ ԵՎ ՆՐՎ ՎՆՎՄՆ ՇՈՒՐԶ ԵՂՎԾ ԽՈՐՀՐԴՎՈՐ ԼՈՒԹՅՈՒՆԸ V ԴՎՐԻ ԿԵՍԵՐԻ ՆՎՅ ՄՎՏԵՆՎԳՐՈՒԹՅՄՆ ՄԵԶ

Սկիզբը՝ էջ 4
Պարսից արքա Արտաշիրը Հայոց Խոսրով թագավորին
սպանելու համար Պարթեւ Անակին խոստանում է բարձր
պարգևներ - հար եւ նման ոճով էլ Պարսից արքայից արքա
Հազկերտը, պարգև խոստանալով, հրապուրում ու հորդո-
րում է հայ նախարարներին ընդունելու մոգության կրոնը.


Ազաթ., §26
«Խօսել սկսաւ (թագա-
ւորն Արտաշիր) ընդ նմա
(Անակայ) եւ ասէ. «**Եթէ
միայն** գայդ նախանձ խնդ-
րեսցես միամտութեամբ՝
զբնութիւնն պարթեական,
զձեր սեփական Պահլաւն ի
ձեզ **դարձուցից**, եւ քեզ
թագ եղեալ փառաւորեցից,
եւ երեւելի եւ փառաւոր ի
թագաւորութեանս իմում
արարից, եւ երկրորդ **ինձ
կոչեցից**»:

Վարդանանց պատմիչը Պարսից արքայից արքա Հազ-
կերտին առավելագույնս բնութագրելու համար շատ հա-
ջող կերպով փոխ է առել Ազաթանգեղոսից հեթանոս ար-
քաների ինքնամեծար ոճերը. Հազկերտի հրովարտական
հմտորեն օգտագործված են Հայոց հեթանոս Տրդատ ար-
քայի հրովարտական սկզբի ու եզրափակիչ ողջույնի բա-
նաձեւերը.

Ազաթ., §131
«**Ողջ լերուք ի դիցն օգ-
նականութենէ դուք ամե-
նեքին... զի մեք գլխսդին
իսկ ողջ եմք**» (հմմտ. Տր-
դատի երկրորդ հրովար-
տակի սկիզբն ու վերջը
(§134, 136):

«Գաղտածիզ նետ» եւ «ծածուկ նետ» համարժեք փո-
խաբերությամբ Ազաթանգեղոսը եւ Եղիշեն պատկերավոր
արտահայտում են Հռոմայեցվոց արքա Դիոկղետիանոսի
եւ Պարսից արքա Հազկերտի նյութած գաղտնի որոգայթ-
ները ընդդեմ քրիստոնյաների, եւ ինչպես այստեղ Դիոկղե-
տիանոսը կոչված է **չարի աման**, այդ նույն բառերով էլ Ե-
ղիշեն է որակում Վասակ մարզպանին.

Ազաթ., §141
«Իսկ իբրեւ տեսին
առաքինիքն **զգաղտա-
ծիզ նետս** թշնամույն,
որ ի **ծածուկն** սովոր էր
ձգել ի սուրբսն քրիս-
տոսասերսն, **աման
չարի** գտեալ զթագա-
ւորն...»:



(Ազաթանգեղոսի «գաղտածիզ նետս թշնամույն,
որ ի ծածուկն սովոր էր ձգել» արտահայտությունը գրո-
ծածել է Փարպեցին իր «Պատմութիւն Հայոց»-ի ԻԳ գլ-
խում. «Եւ ընկալեալ գայսպիսի հրովարտակ ամենայն
Հայոց աւագանույն... ծանուցեալ եւ գառ ի **ծածուկ նետս
թշնամույն, զոր ձգեր** խորամանկութեամբ յանարատ
հօտն Զրիստոսի»):

Ազաթ., §142
«...որ ի նմանէ (Դիոկղե-
տիանոսէ) անցանք ընդ ե-
կեղեցիս Աստուծոյ»:

Շարունակելի
Վլերտ ՄՈՒՇԵՂՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՎՈՐ ԱՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ըստ Սարգիս Շարությունյանի «Բանագիտական ակնարկներ» գրքի

Սկիզբը՝ էջ 5

Մի պատճառաբանական գրույցում ներկայացվում է ս. Սարգսի կապը հացաբույսերի, մասնավորապես՝ ցորենի և դրանից պատրաստված փոխիկի հետ, որն ամենուրեք համարվում է ս. Սարգսի տոնի ծիսական կերակուրը: Ուլիանոս թագավորի դեմ կռվելուց հետո ս. Սարգիսը քաղցում է և մտածում, թե որտեղից մի կտոր հաց ճարի: Այդ պահին ուժեղ քամի է բարձրանում և երկնքից մի քանի ցորենի հատիկ է բերում գգում Սարգսի առաջ: Նա վերցնում է դրանք, ճմռում ափի մեջ, հատիկները հանում գգում բերանը, ուտում, կշտանում: Եվ ապա խնդրում է Աստծուն, որ ով տարվա մեջ այդ հատիկների հիշատակին յոթ օր ծոմ պահի, ուրբաթ օրն էլ փոխիկով թաթախվի, նրա մուրազը տա, ինչ խնդրի կատարվի (տե՛ս Ղևնայան, 1969, 366):

Այստեղ, ուրեմն, պատճառաբանվում է նաև ս. Սարգսի տոնի ծագման ծիսական հիմքը, միաժամանակ ս. Սարգսի խնդրանքով ել աստվածային կամքով սահմանվում է ս. Սարգսի տոնի իր ծիսական ուտեստով, մուրազի կատարման հետեանքով, որն այնուհետև դառնում է կայուն ավանդույթ տարվա ժողովրդական տոնական ծիսակարգում: Այսպես, տեսնում ենք, որ ս. Սարգսի տոնն ու դրան առնչվող ծիսական արարողությունը թե՛ եկեղեցական եւ թե՛ ժողովրդական տոնացույցում կատարվել են փետրվարին, տարվա մի ժամանակաշրջան, որ հատկանշվում է ճյունաբքի եւ մորիկների բնական երեւոյթներով, իսկ հասարակական կենցաղի տեսանկյունից՝ ամուսնությունների եւ հարսանիքների առատությամբ:

Պատճառներ

Ս. Սարգսի տոնի ծիսական ուտեստը փոխիկն է՝ բոված ցորենի ալյուրը, որից պատրաստում են երկու տեսակի ուտելիք. մեկը խաղողահյութով, մեղրաջրով կամ շա-



Երեւանի Սբ Սարգիս առաջնորդանիստ եկեղեցին

քարաջրով պատրաստված շաղախն է, մյուսը՝ փոխիկի խաշիլը, որը ճաշակում են յուրով: Երկուսն էլ խիստ սիրված ու տարածված են Հայաստանի գրեթե բոլոր ազգագրական շրջաններում, տեղ ունեն ժողովրդի առտին ճաշացանկում՝ իբրև ազգային կերակրատեսակների՝ անկախ ծիսական արարողություններից: Ծիսական է համարվել այն փոխիկը, որի ցորենը խարկվել է և աղացվել ս. Սարգսի տոնի ժամանակ: Լցնում էին տախտակի վրա և երեկոյան դնում դռան ետեւը կամ տանիքին և մատուցում ս. Սարգսին՝ մրմնջալով հատուկ աղոթքը. «Մեռիմ քի, առեսահաս բոզ ձիավոր սըփ Սարգիս, դու կգաս քու ձիու ոտ գարկիս մեջ»:

Ս. Սարգսի՝ ամուսնության հովանավորման եւ երիտասարդ զույգերին իրենց սիրո փափագին հասցնելու գործառույթը դրսևորված է դարձյալ մեկ ժողովրդական ծիսական արարողության մեջ՝ կապված հացի եւ ջրի ճաշակման հետ: Ս. Սարգսի տոնի ուրբաթ գիշերը նորահաս երիտասարդները, հատկապես՝ աղջիկները, աղի բլիթ են ճաշակում, որպեսզի երազում ջուր տեսնեն: Ս. Սարգսի հրամանով՝ ճակատագրի կողմից կանխորոշված կյանքի ապագա ընկերները ջուր են տալիս ծարավներին, որով գուշակվում են երիտասարդ-

ների ամուսնական զուգընկերները: Կամ էլ ս. Սարգիսն ինքն է կանխորոշում ապագա ամուսնական զույգերին, նրանց երջանկությունն ու դժբախտությունը (տե՛ս Աբեղյան, 1975, 81): Բացի այդ, նույն երեկոյան նորահաս աղջիկները շաղախված փոխիկից բրդում էին դնում տան կտուրին և հետևում. եթե ճնճողը վերցնում էր այդ բրդումը և թռչում-թռչում մերձակա տների տանիքներից մեկին, ուր նորահաս երիտասարդ էր ապրում, ապա դա նախանշան էր, որ այդ երիտասարդն էր դառնալու իր ապագա փեսացուն:

Ս. Սարգսի՝ ամուսնության հովանավորման այս գործառույթին է հարում նաև նրա՝ ծննդկանի պաշտպան ու պահպան դառնալու հավատալիքը՝ դրսևորված աղոթքներում: Դրանցից մեկում սուրբը բնորոշված է իբրև «Դեւերու հայածիչ և ցավերու փարատիչ», որն այլ բան չէ, քան հիվանդությունն հարուցող դեւերին հալածելը և նրանց պատճառած ցավերից հիվանդին պաշտպանելը: Վանից գրառված՝ ծննդկանի աղոթքի մեկ այլ տարբերակ սկսվում է հետեւյալ երկտողով.

Սուրբ Սարգիս ամուր պարիսպ,
Ամուրական խաչն է թելիս:
(Յարությունյան, 2006, 146 էջ)

Այստեղ սուրբը հանդես է գալիս որպես ծննդկանի պահպանող ու պատսպարող ամրակուռ ու անսասան ոգի:

Տարածված է նաև մեկ այլ հավատալիք՝ դրսևորված ժողովրդական գրույցներում, որ եթե գիշերով գայլերի հարձակման ենթարկվածը ս. Սարգսին օգնության կանչի, ապա սուրբը կգա և կփրկի:

Հայ բանավոր ավանդության մեջ, մասնավորապես՝ «Սասնա ծռեր» հերոսավեպում, ս. Սարգիսը հանդես է գալիս որպես վիպական գործող անձ, որպես Սասնա դյուցազուններին գործակից ու հովանավոր: Վեպում նա կրում է նույն՝ «Ծուռ» մականիքը, ինչ Սասնա մյուս հերոսները. Ծուռ Սըրգո: Սասնա դյուցազունները համարվում են Ծուռ Սըրգոյի ճորտեր ու փոքրավորներ (իմա՝ սպասավորներ): Երբեմն Ձեւով Հովանի անվան համաբանությամբ կոչվել է Ձեւով Սարգիս, դարձյալ՝ իբրև հովանավոր Սասնա կրտսեր ծռերի:

Ի դեպ, գինվորականների հովանավորելու՝ ս. Սարգսի այդ հնավանդ գործառույթը դրսևորված ենք գտնում նաև նորոյա ժողովրդական հավատալիքներում:


Ըստ Երեւանի ռազմական ակադեմիայի ջախխից ուսանողի պատմաժի՝ ճմռանը՝ Ս. Ծննդյան օրերին, գիշերը երազ է տեսնում, ըստ որի՝ ինքը սովորականի պես գտնվում է վերակարգի մեջ, այսինքն՝ վերահսկում է գինվորական հաստատության տարածքի անվտանգությունը, հանկարծ քառատրոփ վարգով տարածք է ներխուժում մի հաղթանդամ սպիտակ ձիավոր: Երիտասարդը ձիավորից պահանջում է կանգնել ու բացատրություն տալ, թե ով է ինքը, ուր է ուզում գնալ և ինչու է մտել գինվորական հաստատության տարածք: Պատասխանի փոխարեն սպիտակ ձիավորը խոյանում է Ե-

րիտասարդի վրա, առնում ամեհի ձիու սմբակների տակ, կոխկրտում թիկունքը և սուրում առաջ: Երիտասարդը թիկունքի ուժեղ ցավերից արթնանում է և երկար ժամանակ թիկունքին զգում սմբակների հետքերի ցավը: Ըստ մտորելուց հետո եզրակացնում է, որ սպիտակ ձիավորը եղել է ս. Սարգիսը: Երիտասարդը հավաստիացնում է ունկնդիրներին, որ այդ երազից հետո ինքը ցանկացած վտանգից դուրս է գալիս բարեհաջող, «քանի որ մեջքիս վրա կա սուրբ Սարգսի ոտնահետքը» (գրառումը՝ բանագետ Սվետլանա Վարդանյանի):

«Կարծում ենք՝ մեր այս անկարկը թերի կմնա, եթե գեթ հպանցիկ գծերով չանդրադասանք հակառակ երեւոյթին՝ ս. Սարգսի հավատքի ու պաշտամունքի նկատմամբ ժողովրդական խավերում եղած կենսախիղ հումորային վերաբերմունքին, - գրում է մեծ բանագետ և հայագետ Սարգիս Յարությունյանը և շարունակում: - Ժողովրդի մարդկանց մեջ ամենասրբազան և լուրջ պաշտամունքի ու հավատալիքի նկատմամբ միշտ էլ առկա է եղել մշտաժպիտ հումորն ու երգիծանքը, և ս. Սարգիսն էլ այդ տեսակետից բացառություն չի կազմել: Ս. Սարգսի տոնի օրերին, Հայաստանի գյուղական շատ վայրերում, երբ տատիկներն ու մամիկները մեծ երկյուղածությամբ փոխիկի այլուր կամ խմոր էին դնում տախտակին և անձկությամբ սպասում, թե գիշերով սուրբը գալու է և իր ձիու ոտնահետքն է թողնելու փոխիկի այլուր կամ խմորի վրա, չարածի երիտասարդները, հաճախ գիշերով, ձիու պայտ էին բերում և հետքը դաշում փոխիկի վրա: Առավոտյան մի իսկական իրարանցում էր ընկնում տվյալ տանն ու ամբողջ գյուղում: Ս. Սարգսի ոտնահետքի լուրն իսկույն տարածվում էր գյուղով մեկ, հավատավորները, մեծ երկյուղածությամբ ու աղոթքներ մրմնջալով, դիմում էին այդ երջանիկ տունը՝ թույլ առաջ տեսնելու սրբի այդ նշանը և տեսնելուց հետո շերմեռանդությամբ հիանում: Իսկ գործին տեղյակ սակավաթիվ մարդիկ լուռ քրքրում կամ ծիծաղում էին միամիտ հավատավորների վրա»:

ԱՆՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ

ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱԶ



Սկիզբը՝ էջ 3

Եվ բոլորս մեր տեղն ունենք Աստծո արքայության մեջ, երբ մոտ ենք Տիրոջն ու կատարում ենք Նրա պատվիրանները, ապրում իսկական քրիստոնյային վայել կյանքով: «Սիրեցե՛ք ձեր թշնամիներին, օրհնեցե՛ք ձեզ անիծողներին, բարություն արեք ձեզ ատողներին և աղոթեք նրանց համար, որ չարչարում են ձեզ ու հալածում, որպեսզի... որդիները լինեք ձեր Հոր, որ երկնքում է, քանի որ Նա իր արեգակը ծագեցնում է չարերի ու բարիների վրա և անձրե է թափում արդարների ու մեղավորների վրա» (Մատթ. Ե 44-46): Ահա սրանք են ճշմարիտ աստվածամանությունը, չարի դեմ պայքարն ու Աստծո ճանապարհը, որ «նեղ դռնով» ներս մտնենք, «որովհետև լայն է այն դուռը, եւ ընդարձակ այն ճանապարհը, որ դեպի կորուստ է տանում, ու շատերն են նրանով մտնում, քանի որ նեղ է այն դուռը,

ու նեղվածք այն ճանապարհը, որ դեպի կյանք է տանում, ու քչերն են այն գտնում» (Մատթ. Ե 13-15): Այս ճանապարհին մեզ ոգևորողը Սուրբ Հոգին է, առաջավար լույսը՝ մեր սուրբ հավատքն ու հավատամքը:

Իսկ ինչպե՛ս պայքարել չարի որոգայթների, աշխարհիկ գայթակղությունների ու փորձությունների դեմ, ո՞րն է մեր փրկության երաշխիքը: «Մարդկանց կյանքի ուժ տալու, ապրելու երաշխիքն Աստծո անխաբ խոստումն է, որ մեզ ապահովում է բոլոր գործերում», - ասում են մեր սուրբ հայրերը: «Ըն գործերը Տիրոջը հանձնե, և քո խորհուրդները պիտի հաստատվին» (Առակ. ԺԶ 3): Ամեն պահ Տիրոջ օգնությանն ապավինելով, Նրան հետեւելով՝ մենք կարող ենք հաղթահարել ժամանակավոր ու աշխարհիկ ամեն արգելք ու խոչընդոտ՝ առաջ ընթանալով դեպի կատարելություն: «Խնդրեցե՛ք եւ կտրվի ձեզ, փնտրեցե՛ք եւ կգտնեք, թատեք դուռը, և կբացվի ձեր առջեւ, որովհետև ամեն խնդրող ստանում է, և փնտրողը՝ գտնում, և դուռը ծեծողին բացվում է» (Մատթ. Ե 7-9):

«Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը եւ կյանքը, ոչ ոք Հոր մոտ չի գա, եթե ոչ իմ միջոցով» (Հովհ. ԺԴ 6): Այս է Տիրոջ պատվիրանը, որ վերցնենք մեր խաչն ու քայլենք Նրա հետեւից: Այս կյանքում ամենքս էլ կրում ենք մեր խաչը՝ դժվարությունների, հոգսերի ու մտահոգությունների ծանր բեռը, մեր խնդիրն այն արժանապատվորեն կրելն է՝ համբերությամբ, առանց տրտնջալու և, որ ամենակարեւորն է, առանց ուրիշներին ցավ պատճառելու: Հնարավորինս օգնել մարդկանց, տալ նրանց լավագույնն ու նվիրակաւը. այս է ճշմարիտ քրիստոնյայի նպատակը, և ճանապարհը՝ մոտենալու Աստծուն: «Տո՛ւր նրան, ով քեզից խնդրում է, և ով կամենում է քեզից փոխ առնել, երես մի՛ դարձրու նրանից» (Մատթ. Ե 42): «Վերջի վերջը դուք կհամոզվեք, որ այդ ամենը եղել է Աստծո և ձեր միջեւ, և ոչ երբեք ձեր և նրանց միջեւ», - ասում է Մայր Թերեզան:

Իսկական քրիստոնյայի կոչումը Տիրոջ հաղորդակից լինելն է, իբրև Աստծո պատկեր՝ Նրա իմաստությունը, սրբությունը, արդարությունը ու սերը կրելը, Աստծո հետ միանալը, քանի որ աստվածայինը, բարձրագույնն ու վեհագույնը միմիայն Նա կարող է տալ մեզ: Աստծու արքայությունը մտնել տեսչացողը չպետք է աչք ունենա

այս աշխարհի և որեւիցե հարստության վրա: «Գանձեր դիզեք ոչ թե երկրի վրա, այլ երկնքում, որտեղ ցեցն ու ժանգը չեն փչացնում, և որտեղ գողերը անցք չեն փորում ու չեն գողանում» (Մատթ. Զ 19), - ուսուցանում է Տերը, որ մեր կառուցած շէնքն այնտեղ հաստատուն ու կայուն լինի, այլ ոչ ավազից՝ անհաստատ ու շարժուն:

Ապրենք ճշմարիտ կյանքով՝ ընդառաջ գնալով Տիրոջը՝ Նրա պատվիրանները կատարելով: Խնդրենք Աստծո արքայությունը, մնացածը ավելիով կտրվի մեզ:

Սարգիս ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԵԴՅ-ի ժուռնալիստիկայի ֆակուլտետի
4-րդ կուրսի ուսանողուհի



ԿԻՑ ԱՆՃՅԱԿՈՒՄ

Սկզբը՝ էջ 6

Նույնպես եւ առակն է ասում՝ ինչ որ պատրաստել ես, ո՞ւմն է լինելու, ո՞ւմ համար ես դիզում ու կուտակում: Ըստ առակի՝ ինքը չվայելեց: Իսկ թե ում մնաց, կարելու է: Թերեւս, իրենից բացի, ում էլ որ մնա, ավելի արժանավոր պիտի լինի, եթե իր պես չմտածի: Այս ամենի մեջ նաեւ մի շատ մեծ մոլորություն կա. տեր լինելու, ինքնաբավ լինելու խաբկանքն է դա. տեր եմ, շատ տարիների համար ամբարված հարստություն ունեմ, ուրեմն՝ երջանիկ կլինեմ եւ... վերջ: Մարդը մտածում է, որ իր կյանքը կերուխում է, գեխություն: Իսկ գեխության համար ի՞նչ է պետք՝ փող, հարստություն, փողոն էլ կա, ուրեմն՝ էլ ոչ մի խնդիր: Բայց՝ չսխալվե՛ք. Աստծու ձեռքին է ամեն բան՝ առողջությունն էլ, կյանքն էլ, մահն էլ, հարստությունն էլ, հարստությունից զրկվելն էլ...

- Ասել է թե՛ ամեն բան ժամանակավոր է, եւ որեւէ մեկն այս աշխարհում տեր չէ, այլ ընդամենն Աստծո ունեցվածքի ժամանակավոր օգտագործող: Եթե անգամ ամեն ինչ մնում է գավակներից, միեւնույն է, նրանք էլ այդ հարստությունը չեն տնօրինելու հավերժորեն: Տե՛ր հայր, Յովհաննէս Ոսկեբերանն ասում է. «Միայն նրանք են տիրում հարստությանը, ովքեր քամահորել են ե՛ւ դրա օգտագործումը, ե՛ւ խնդացել դրանից ստացած հաճույքների վրա: Միայն նա, ով մերժել է հարստությունը եւ բա-

ԱՎԵՏԱՐԱՆՆԱԿԱՆ ԱՌԱԿՆԵՐ «ՎՆԱԻՏ ՄԵԾՎԱՎՐՈՒՄՏԸ»

Մեր հյուրն է Բյուրավանի Սբ Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Ղազար քհն. ՊԵՏՐՈՍՅԱՆԸ



ժանել աղքատներին, նա՛ է, որ հարստության վրա ունեցել է կատարյալ իշխանություն»:

- Ոսկեբերան հայրապետի խոսքը կատարյալ մարդու եւ հոգու կատարյալ վիճակի մասին է, այսինքն՝ այն, ինչ պահանջում էր Զրիստոսը մեծահարուստ երիտասարդից (տե՛ս Մատթ. ԺԹ 16-22), այն է՝ ամբողջ ունեցածը բաժանել աղքատներին եւ հետեւել իրեն: Այսպիսի կյանք եւ կենցաղավարություն մենք շատ ու շատ սրբերի մոտ ենք տեսնում: Եվ մենք, որ ապրում ենք սովորական երկրային կյանքով եւ ի

զորու չենք նման հոգեւոր սխրանքներ կատարելու, հարկ է, որ խոնարհվենք նրանց առաջ, ովքեր այս կյանքում հասել են այդչափ մեծ սրբության:

Վերջերս գրուցում էինք հարստություն-աղքատություն կյուրթի շուրջ (աղանդավորական ազդեցություն կրած միջավայր էր): Մեկն ասաց. «Տե՛ր հայր, աղքատությունը չարիքների մայրն է»: Ասացի. «Ո՛չ, նման բան չկա»... Եվ մարդիկ իսկական «փոթորիկ» սարքեցին՝ չթողնելով միտքս ավարտել: Ասում էին. «Տե՛ր հայր, դու, ի՞նչ է, չե՞ս ուզում, որ մեր ժո-

ղովորը լավ ապրի, հարուստ լինի»: Եվ կամ՝ «Առված փորով Աստծուն չես պաշտի, Աստծուն պաշտում են նրանք, ում փորը կուշտ է», եւ այլն, եւ այլն... Ո՛չ, նման բան չկա: Սրբերի ցանկը՝ ձեզ օրինակ եւ ապացույց: Մեր Տեր Յիսուս Զրիստոսից սկսած՝ բոլոր սրբերն աղքատ մարդիկ են եղել:

- Եկեղեցու վարդապետները հաճախ են շեշտում այն միտքը, որ նրանք, ովքեր շատ ունեն, սակայն քիչ ողորմություն են անում, այդ արածը բավական չէ նրանց փրկության համար: Սակայն մյուս կողմից՝ չե՞ որ ամենակարեւորը քանակը չէ, այլ այն, թե ինչ կա քո սրտի մեջ: Զե՛ որ Աստված տեսնում է մեր սրտերը եւ կարդում է մեր մտքերը: Երբ Յիսուսը Չակքեոս մաքսապետին ասաց. «Այսօր քո տան համար փրկություն եղավ», կարծում եմ՝ ոչ նրա համար, որ Չակքեոսը խոստացավ քառապատիկը հատուցել նրանց, ում զրկել էր, եւ ընդհանրապես՝ իր ունեցվածքի կեսը բաժանել աղքատներին, այլ ավելի այն պատճառով, որ նա զղջաց իր արածների համար՝ խոստանալով այլեւս ազնիվ կյանքով ապրել: Զամաճայն չե՞ք, տե՛ր հայր:

- Այո՛, բայց քանակի խնդիրը չպետք է իսպառ անտեսել. չե՞ որ քանակը համեմատության հնա-

րավորություն է տալիս: Իսկ համեմատությունը հաճախ շատ կարեւոր հանգամանք է: Այլապես, երբ Երիստոսը կանգնած էր գանձանակի կողքին եւ տեսնում էր, որ շատերը շատ դրամ գցեցին, պիտի ասեր. «Բոլորն էլ գցեցին»: Այդ դեպքում այրի կնոջ երկու լուման, որն իր ամբողջ կարողությունն էր, չափտի արժեւորվեց եւ ավելի շատ դիտվեց Տիրոջ կողմից, քան մեծահարուստի տվածը, որ թվաբանորեն, թերեւս, 100 անգամ ավելի էր այրի կնոջ տվածից, սակայն պարզ համեմատությամբ չնչին մի բան էր այրու երկու լումայի դիմաց, քանի որ սա իր կուտակածից, ավելցուկից տվեց, իսկ այրին՝ «իր ունեցած ամբողջ ապրուստը»: Ըստ այդմ էլ, այո՛, աղքատ այրին ավելի շատ օրհնություն պիտի վայելեր, քան մեծահարուստը, որ իր ավելցուկն էր տալիս:

Իսկ այս առակի մեծահարուստը, ով մտածում էր միմիայն կուտակելու, ուտել-խմելու, վայելելու մասին, ով «ի՛ր անձի համար գանձեր դիպեց եւ Աստծով չհարստացավ», կվայելի՞ արդյոք աստվածային օրհնության անշան մի պտղունցը: Զագի՛վ թե՛:

Յետեւաբար՝ ոչ թե այստեղ շտեմարաններ կառուցենք, որ երկրային գանձերով լցնենք, այլ Տիրոջ պատգամի համաձայն, գանձեր դիպենք երկընթաց, «որտեղ ո՛չ ցեց եւ ո՛չ ծանգ չեն ոչնչացնում, եւ ո՛չ էլ գողերը պատերն են ծակում ու գողանում» (Մատթ. 2 20):

Յուրընկայեց Յայկ ԿԱՐՎԱՊԵՏՅԱՆԸ

ԼՈՒՐԵԸ Մուկիլայից

ՈՒՍՏԱԳՆԱՅՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ԵՐԿԻՐ

Եզրաս եպս Ներսիսյանի օրհնությամբ եւ Ռոստովի մարզի Չալթր գյուղի Ս. Զամբարծում եկեղեցու հոգեւոր հովիվ Թադեոս քհն. Գայրաբյանի առաջնորդությամբ մի խումբ հավատացյալներ ութօրյա ուխտագնացություն կատարեցին Սբ Երկիր:

Ուխտավորները գիշերեցին Գաբրիել եւ Սիջայել հրեշտակապետների վանքի փոքրիկ խցերում, մասնակցեցին Երուսաղեմի Զայոց Պատրիարքարանի Սրբոց Զակո-

տարել, ինչպես նաեւ թըջվեցին Զորդանանի սբ ջրերում:

Ուխտավորները բարձրացան նաեւ Գեթսեմանի պարտեզ եւ Զամբարծման մատուռ:

ՆԱ ՔԱՋԱՐԻ ԶԻՆՎՈՐ Է, ՈՐՈՎՈՂՆԵՏԵՎ ՀԱՅ Է

Բանաստեղծի այս տողերով իր խոսքն սկսեց գրող, թարգմանիչ Ե. Դոլբակյանը, ում «Նուռ» եկեղեցու երիտասարդաց միությունը Զայոց բանակի 20-ամյա հոբելյանի առիթով հրավիրել էր Մոսկվայի հայորդյաց տուն՝ «Յա-



բանակի ստեղծման վեճ ու նշանակալի տոնի առիթով:

Գաբրիել Կորգանովի՝ ընթերցողի դատին ներկայացված գիրքը ֆրանսերենից ռուսերեն թարգմանել են Յու. Լ. Փիրումյանը եւ Ե. Ե. Դոլբակյանը:

Գրքում նկարագրվում է, թե ինչպես են հայ կամավորները կովկասյան ճակատում 1914-1918 թթ. մասնակցել ռազմական գործողություններին եւ ինչ սխրագործություններ են կատարել: Լինելով կովկասյան բանակի ազդեցիկ հրամանատարներից մեկը՝ Կորգանովը նաեւ նկարագրում է, թե ինչ պայմաններում են ձեւավորվել կամավորական ջոկատները: Ե. Դոլբակյանը, ներկայացնելով գեներալ Գաբրիել Կորգանովի կողմից նման հույժ կարեւոր գիրք ստեղծելու նախաձեռնության պատմությունը, ընդգծեց, որ այն փաստորոշ է ականատեսի աչքերով գրված իրական պատմությունների նկարագրություն է եւ օգնում է ճշգրիտ եւ լիակատար պատկերացում կազմել Առաջին համաշխարհային պատերազմին հայերի մասնակցության մասին: Ինչպես տեղեկացրեց Ե. Դոլբակյանը, գիրքը ընթերցողների կողմից մեծ հավանությամբ է արժա-

նացել, եւ այժմ այն հայերեն թարգմանելու եւ տարածելու նպատակ ունի: Զանդիպանը ներկա էր նաեւ Զայոց բանակի հիմնադիր գեներալ-լեյտենանտ Նորատ Տեր-Գրիգորյանը: Ներկայացնելով Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կամավորական ջոկատների տեղաշարժը կովկասյան ճակատում՝ Նորատ Տեր-Գրիգորյանը մանրամասնեց նաեւ արցախյան մարտերի եւ Զայոց բանակի ստեղծման պատմությունից որոշ դրվագներ:

Զանդիպան ավարտին ներկաներին օրհնության եւ շնորհավորանքի խոսք ասաց «Նուռ» եկեղեցու երիտասարդաց միության հոգեւոր առաջնորդ Զակոբ քհն. Սարոյանը:

Ի հիշատակ հանդիպման՝ տեր հայրը երիտասարդաց միության անունից հյուրերին եկեղեցական օրացույցներ եւ օրհնված խաչեր նվիրեց:

Ս. ՍԱՐԳՍԻ ՏՈՒՆԻ ՄՈՍԿՎԱԲԵՆԱԿ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԳՆԵՐ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ԱՍԱՅԱՆ

Փետրվարի 4-ին՝ սբ Սարգսի տոնին, Մոսկվայի Նորակառույց եկեղեցական համալիր էին եկել

հատկապես երիտասարդները, որպեսզի Սբ Խաչ եկեղեցու մասնակցեն ժամերգությանը, ստանան օրհնություն եւ հայցեն արագահաս սրբի բարեխոսությունը:

Ժամերգությունից հետո կատարվեց երիտասարդների օրհնության կարգ:

Սրբի հիշատակության շնորհաշատ օրը Սահակ աբեղա Շաքարյանը ներկաներին փոխանցեց թեմակալ առաջնորդի օրհնությունն ու շնորհավորական խոսքը: Զայոց սուրբ երիտասարդներին հորդորեց ս. Սարգսի օրինակով անմատուցող ծառայել Աստծուն, որպեսզի Տիրոջ սերն ու ողորմությունը հեղվեն իրենց կյանքում:

Ժամերգության ավարտին երիտասարդները մոտեցան համբուրելու սբ խաչն ու Ավետարանը եւ օրվա խորհրդով լուսավորված վերադարձան իրենց տները՝ որպես նվեր տանելով եկեղեցական օրացույցներ:

Ավարդ ՆԱՍՐԻՅԱՆ



բյանց տաճարում մատուցված Պատարագին, այցելեցին Գյուլբեկյան մատենադարան, Թարգմանչաց դպրոց:

Ուխտավորները եղան նաեւ Ավետման տաճարում, Գաբրիել հրեշտակապետի եկեղեցում, որտեղով հոսում է սբ Կույս Մարիամ Աստվածամոր աղբյուրը, եղան Կանաքաղացում, որտեղ առաջին հրաշքն է կատարվել, Տաբաթախում, որտեղ Յիսուս Զրիստոսը հացի բազմացման հրաշքն է կա-

մաշխարհային պատերազմին հայերի մասնակցությունը կովկասյան ճակատում 1914-1918 թթ.» գրքի շնորհանդեսին:

Յունվարի 30-ին կրթօջախի հարկի ներքո հավաքվել էին մի շարք բարձրաստիճան հայ եւ ռուս գիտնականներ, մշակույթի գործիչներ, մանկավարժներ, սաներ:

Սահակ աբեղա Շաքարյանը, ողջունելով ներկաներին, փոխանցեց թեմակալ առաջնորդի օրհնությունն ու շնորհավորանքը՝ Զայոց

ԵՐԽՍՏՈՆՅԱ ՅԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Յիմարդիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Յրատարակիչ՝
«Երիտասարդ Զայոց» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլյան

Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սբ Էջմիածին
Գեղարքունիքի մարզի
Գեղարքունիքի մարզի
Պոստ. տպագր. 20.2.2012 թ.

Տպագրանակ՝ 2100
Գինը՝ 50 դրամ

Էլ. փոստ՝ qh@etchmiadzin.am
web կայք՝ kh-tert.livejournal.com
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 20.2.2012 թ.